

ՓՎ ՌՔ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ

Ընդունուած եւ բազմիցս հաստատուած ճշմարտութիւն է, թէ ո՛րքան լարուած ու տենդագին եղած է որեւէ գործի թափն ու կշռոյթը, ա՛յնքան աննկատ եւ արագ սահած է ժամանակ կոչուած դատաւորը: Նո՛յնքան եւ ճիշդ է այս վարկածին հակառակը: Սակայն, եռեւեփող կեանքի արագասոյր ընթացքին պէս՝ միշտ ալ աննշմար սահած են նաեւ ստեղծագործական կենսունակութեան ժամացոյցին սլաքները, նոյնիսկ առանց պզտիկ առաջին հանգրուանէն երկրորդ հանգրուան անցումը:


Այդպէս եղաւ նաեւ պարագան «Ակօ» եւ «Հայրենիք» ամսագիրներու ակամայ ընդհատուած ջահերը շարունակելու առաքելութեամբ չորս տասնամեակ առաջ հրապարակ իջած «Բագին» ամսագիրին, որ արուեստի եւ գրականութեան մակարդակի հանդէպ իր ցուցաբերած բծախնդրութենէն ո՛չ մէկ քայլ զիջում կատարելով հանդերձ՝ չեղաւ «արուեստը՝ արուեստին համար» ինքնանպատակ յանկերգը կրկնող ընթացիկ հրատարակութիւն մը, այլեւ արուեստին չափ գուրգուրաց անոր ազգային նկարագիրին վրայ, շեշտեց զատորոշուող ինքնութեան մարդկային նշանակութիւնը եւ արդարօրէն հանդիսացաւ Հայաստանեայց Գրականութեան ամանդներուն հաւատարիմ պահակն ու շարունակողը:

«Բագին» եղաւ ամբողջակա՛ն ամսագիր: Ամբողջակա՛ն՝ ո՛չ միայն իր գրական եւ մերձ գրական բազմապատկանութեամբ, այլեւ՝ իրարմէ բոլորովին տարբեր սերունդներու ինքնուրոյն ստեղծագործութիւններուն տէր կանգնելու լայնախոհութեամբ: Ամբողջակա՛ն՝ նաեւ իր համապարփակ աշխարհահայեացքով ու հետաքրքրութիւններով, որոնց շնորհիւ անոր էջերուն տեղ գտան եւ արժեւորուեցան թէ՛ Սփիւռքի պանապան հայօճախներու մէջ ստեղծագործող գրողներու ամենաթարմ հրագործումները եւ թէ միջազգային ու հայրենի գրականութեան նորագոյն հիմնահարցերն ու նուաճումները, եզակի փայլատակումներն ու քաղաքակրթական յաղթանակները:

Բացէ՛ք գրադարան մը լեցնող «Բագին»ի 40 հաստափոր հաւաքածոները, եւ դուք անվարան պիտի համոզուիք, որ ամենայն բծախնդրութեամբ եւ գուրգուրանքով ձեւաւորուած «Բագին»ի իւրաքանչիւր թիւ հայ մտքի ու հոգիի կենսաթրթիռ հանդէս ու խրախմանք է ամբողջական:

Վերջապէս, «Բագին»ի փառապսակը հիւսող թարմ ուտերը հաւատարմութիւն, նուիրում, պոհաբերում եւ վճռակամութիւն կոչուած բացառիկ արժէքները չեն միայն, այլեւ՝ այն մագնիսական պօրութիւնը, որուն շնորհիւ «Բագին» յաջողեցաւ իր շուրջ համախմբել իրերայաջորդ սերունդներու հարիրաւոր նուիրեալներ եւ, հակառակ իր յաղթագնաց երթը արգելակել նկրտող այլաբնոյթ արգելքներուն ու խոչընդոտներուն, մնաց մի՛շտ երիտասարդ եւ շարունակեց հաւատաւոր քուրմի իր յաղթակշռոյթ ընթացքը:

Փա՛ռք «Բագին»ի քառասնամեայ երթին եւ հապա՛ր փառք այդ երթին շարունակականութիւնը հաստատ պահող հեռու թէ մօտիկ, հին ու նոր բոլոր նուիրեալներուն...



ԱՒԱՆԴԱՊԱՀՆԵՐՈՒՆ ՈՒԽՏԸ

Քառասնամեակ մը մեզ կը բաժնէ այն օրէն, երբ Հայաստանէայց Գրականութեան ջահը բարձր պահելու առաջադրանքով ճամբայ ելած խումբ մը հաւատարմութեամբ խմբուեցան հայ ոգիի ու մտքի զոհասեղանին շուրջ եւ կեանք տուին «Բագին» գրականութեան եւ արուեստի ամսագիրին: «Հայրենիք», «Ակօս» եւ այլ ամսագիրներու շիջումով գոյացած լուրջինը կամ կիսալուրջինը կարելի չէր երկար պահել: Լուրջինը հոմանիշ էր մահուան, իսկ պարբերաբար հնչող երկչոտ ձայները այլ բան չէին, եթէ ոչ նախերգանք գալիք անկեանդանութեան:

Կեանքը, սակայն, կը շարունակէր ընթանալ իր տրամաբանութեամբ եւ դարերու փորձառութեամբ պողպատացած հայկեան մտածողութիւնը կը հրահանգէր ո՛չ միայն զէնքերը վար չդնել, այլեւ ազգովին ծառանալ աջէն ու ձախէն ահագնացող խորշակներուն դէմ եւ հայ մշակոյթի անպարտելի ներուժով ջախջախել ապամշակութային ամէն սպառնալիք ու վտանգ: Հայոց պատմութեան դարաւոր ոգին շեշտաւորող անմահներուն հրամանը չէր կրնար անարձագանգ մնալ: Չմնա՛ց: Ուխտապահները անսացին հրաւերին եւ իջան հրապարակ:

Անյետաձգելի նման պահանջէ մը ծնունդ առաւ «Բագին» եւ իր ուղին շարունակեց հաստատ քայլերով: Նոյնիսկ ումբերու եւ տնտեսական անբաղձալի կացութեան շօշափելի եւ անշօշափելի վտանգներու տարափներուն տակ, «Բագին»-ի նիւթական յանձանձումը ստանձնած գաղափարական մեծ շարժումը տէր կանգնեցաւ իր կոչումին, ոգի ու հաւատք ներշնչեց, եւ մերձակայ թէ հեռակայ երկնակամարներու տակ ստեղծագործող հայ գրողներ, ուղղակի եւ անուղղակի ճամբաներով, շարունակեցին բարձր պահել հաւատարմութեան դրօշները եւ խմբագրութեան հասցնել նորանոր աշխատակցութիւններ:

Սերունդներ ստեղծագործեցին կողք կողքի, յաջորդեցին իրարու եւ «Բագին»-ի էջերը հարստացուցին նոյն հաւատքով, միեւնոյն երջանկութեամբ, բայց նախորդներէն տարբեր թարմ ու նոր ոճով: Հիմնադիրներէն ու առաջին սերունդէն շատեր արդէն պատմութիւն դարձած են: Բայց անոնց տեղը այսօր գրաւած են, աւելի ճիշդ՝ կը փորձեն գրաւել երիտասարդ նոր նուիրեալներ:

Ա՛յս է հիմնականը:


Նոյն հաւատքով, միեւնոյն նուիրումով եւ ա՛լ աւելի ջղապիրկ կենսունակութեամբ ստեղծագործական խրախճանքը զուարթ ու պայծառ, առինքնող ու բազմախորհուրդ պահելու ամբողջական հաւատարմութիւնն է նախապայմանը, անխուսափելի՛ն, որպէսզի «Մէկ ազգ, մէկ գրականութիւն» նուիրական տեսլականի անխոնջ խնկարկու ոգիի եւ մտքի այս միջնաբերդը մնայ մի՛շտ կանգուն, հզօր ու վեհասլաց, պայծառ ու լուսաճաճանչ, եւ աւանդապահները շարունակեն իրենց յաղթարշաւը՝ դէպի նոր քառասնամեակներ:

Ողջո՛յն «Բագին»-ի քառասնամեակին եւ բիրտ ողջոյն՝ գալիք տասնամեակներուն...

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ԲԱԳԻՆ

1/ՉՄԵՌ-2002



1962-2002

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Պէյրուր, Լիբանան,
«Բագին» հանդէսի
խմբագրակազմին

Սիրելի գրչակից բարեկամներ,

Հայաստանի Գրողների Միութեան նախագահութեան անունից ջերմագին շնորհաւորանքներ ենք յղում Ձեզ՝ «Բագին» հանդէսի 40ամեակի կապակցութեամբ: Իր արգասաբեր ճանապարհը «Բագին»-ն անցել է ազգային ու գրական արժէքների հանդէպ անսասան նուիրումով: Այսօր վստահաբար կարող ենք գնահատել «Բագին»-ի դերը՝ իբրեւ մտաւորականների մի քանի սերնդի գիտակցութիւն ձեւաւորող եւ խթանող պարբերականի, որն արթուն է պահել գրական ու հասարակական միտքը Սփիւռքի դժուարին պայմաններում եւ պատուաւոր տեղ գրաւել հայոց մամուլի ամենահեղինակաւոր երեւոյթների ցանկում:

Նոր դարասկզբին, երբ իր անկախութիւնը վերագտած Հայաստանի իրողութիւնը ստեղծում է միանգամայն նոր եւ համընդհանուր ազգային իրականութիւն, մեր մտաւոր եւ հոգեւոր ներուժի կենտրոնացումը դարձել է կեանքի հրամայական: Արժանին մատուցելով «Բագին»-ի հիմնադիրներին եւ բոլոր ժամանակների նուիրեալներին, մենք լիայոյս ենք, որ Ձեր հանդէսը լուսազոյնս կը ծառայի այդ նպատակին, իր էջերում մէկտեղելով Սփիւռքն ու Հայրենիքը, ի շահ ամբողջ հայութեան եւ մեր բարոյական յենարանը կազմող գրականութեան:

ՀԳՄ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ

ԽՕՍՔ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ

Յարգարժան եւ սիրելի խմբագրութիւն
«Բագին» ամսագրի,

Կ'ողջունեմ «Բագին»ի ջանակիրներդ:

Կարելի է չհիանալ քառասուն տարիներու ընթացքին հայ գրիչներով ճարտարապետուած ու հարստացած այն մատենադարանին վրայ, որ կը կոչուի «Բագին»:

Կարելի՞ է արդեօք երեւակայել, թէ ի՞նչ ջանք, ի՞նչ աշխատանք, ի՞նչ հաւատք ու նուիրում, ի՞նչ տեսիլք ու գոհողութիւններ պահանջուած ըլլալու են ձեզմէ՝ նման պատմական հրատարակութիւն մը, տարուէ տարի, պահելու համար մշտակենդան ու մշտանորոգ եւ ջահի մը պէս ալ՝ մշտաբորբոք: Ա՛յն ալ՝ «սփիւռքեան դժուարին պայմաններու մէջ», յանուն Մեսրոպ Մաշտոցի եւ ի սէր Հայ Գիրին ու Գիրքին:

Ձեր բազմաթիւ ընթերցողներու եւ համակիրներու խմբերգին մէջ, թող ձայն մըն ալ ի՛մա ըլլայ, ջերմաջերմ գնահատանքի՝ ձայն մը, շնորհաւորելու ուրախաւիթ 40ամեայ յոբելեանը ձեր ամսագրին եւ գրչեղբայրական խնդակցութիւնս յայտնելու ձեզի այն մեծահարուստ ժառանգութեան համար, զոր կը կտակէք Հայ Մշակոյթին, ի վայելում ներկայ ու ապագայ մշակութասէր մեր սերունդներուն:

«Բագին»ի քառասնամեայ պատկառելի դէզին առջեւ, անբաւ գոհունակութիւն եւ ուրախութիւն է հաստատել, թէ ան, իր ծնունդէն ի վեր, նման մշակութային ու մանաւանդ գրական ծառայութիւն արդէն կատարած է եւ պիտի շարունակէ՝ իրագործել իր ազգօգուտ դերը, դալար ու ծաղկուն պահելու համար Հայ Գրականութեան մրգաստանները, Սփիւռքի սպառնալուծնչ փերուսն վրայ:

Ինծի կը մնայ «Բագին»ին սրտաբուխ մաղթել նորանոր 10ամեակներու եւ գագաթներու նուաճումներ, ի պատիւ հայ ժողովուրդին եւ ի գոյատեւում հայտնորի Գիրին ու պանծալի Հայ Հոգիին:

Եղբայրական բարեկենդանով ու սէրով՝

«ԲԱԳԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԸ ԵՒ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ

Հայ գրականութեան եւ մշակոյթի ծառայութեան նուիրուած որեւէ հանդէսի քառասուն տարիներ առանց դադարի հրատարակուիլը պատմական մեծ յաջողութիւն է:

Սփիւռքի դժուարին պայմաններուն մէջ, հակառակ գոյութիւն ունեցող բազմազան խոչընդոտներուն, «Բագին» ամսագրի իրագործած այս յաջողութիւնը եւ վաստակը պանծալի երեւոյթ մըն են:

Անկախաբար այս երկարամեայ գոյատեւման, «Բագին» ամսագիրը հրատարակութիւն մըն է, որ պատիւ կը բերէ համայն հայութեան:

«Բագին»ի ամէն թիւ՝ բովանդակալից է, ճշակաւոր եւ միշտ հետաքրքրական: Ամէն թիւի մէջ ընթերցողը կը գտնէ գրական գեղարուեստական եւ պատմական նոր յայտնութիւններ:

«Բագին» ամսագրի քառասուն տարիներու հաւաքածոներուն մէջ կայ հարուստ ժառանգ մը, մեր գրականութեան պատմութեան համար: Կայ նաեւ անկորնչելի ժառանգ մը, մեր մշակոյթին եւ պատմութեան համար:

«Բագին» ամսագրին համար կատարուած այս գնահատութեանց փառքն ու պսակը կը պատկանի, գլխաւորաբար, անոր պատուական խմբագիր Պօղոս Մնայեանին:

Ան իր մատղաշ տարիքին եղաւ հիմնադիրներէն «Բագին» ամսագրի եւ քառասուն տարիներ անվերջ խմբագրեց զայն համբերութեամբ եւ նուիրումով:

Ան ունի տաղանդն ու հմտութիւնը նման գրական ամսագրի մը խմբագրութիւնը վարելու: Ան ունի սէրը Հայ Գիրին հանդէպ, եւ որ ամէնէն կարեւորն է՝ ան ունի հաւատքը:

Հաւատքն է, որ Պօղոս Մնայեանը օժտեց քաջութեամբ՝ որ քառասուն տարիներ տոկայ ան եւ շարունակէ իր նուիրական գործը:

Հաւատքն է, որ Պօղոս Մնայեանը օժտեց բացառիկ վճռակամութեամբ՝ որ դառնայ հայ գրականութեան անվհատ զինուորեալը:

Փասատիւն, 25 Նոյեմբեր 2002

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ԹՈՐԳՈՍ ՓՈՍԹԱՃԵԱՆ


ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ...

«Ազդակ» օրաթերթի
Պատուարժան խմբագրութեան,

Սիրելի Պաշտօնակիցներ,

Մեզի նման գրողներու ու գրասէրներու համար անսահման հաճոյք է ողջունել «Բագին» գրական ամսագրի 40ամեակը: Այս մէկը յաղթանակ մըն է հայկական չափանիշներով, քանի որ բոլորս ալ գիտենք, թէ որքան փշոտ եղած է եւ միշտ ալ է՝ գրական ամսագիրներու ուղին: Եթէ պահ մը մոռնանք միւս ծառայութիւնները, «Բագին»ը կրնանք շնորհաւորել միայն իր այդ երկարակեցութեան համար: Եկէք այս շնորհաւորելի երկարակեցութեան փաստին վրայ աւելցնենք նաեւ քառասուն տարիներու ընթացքին հայ գրասէրներու հրամցուած աշխատանքի մը անկորնչելի պտուղները: Ինչե՛ր ու ինչեր կորուստէ փրկուեցան, կամ պարզապէս ստեղծագործուեցան «Բագին» ամսագրի հոգածութեան ու լայնածիր շահագրգռութիւններուն շնորհիւ:

Գրական ամսագրի մը ամենակարեւոր առաքելութիւնն այս է արդարեւ: Հոգածութիւն գրականութեան նկատմամբ, լայնախոհ ու քաջալերական կեցուածք գրական ստեղծագործութիւններու նկատմամբ, նաեւ առաջնորդի դեր՝ գրականութեան սիրահարներուն համար: Վստահ ենք, որ քառասնամեայ «Բագին»ը այսուհետեւ ալ աւելի պիտի ընդլայնէ իր հետաքրքրութիւններու շրջանակը եւ պիտի հանդիսանայ Միջին Արեւելքի սփիւռքահայ ամբողջ հայ գրականութեան պատուարան բերդը: Սա՛՛ արդէն պէտք է ըլլայ 41րդ տարուան առաջին գլխաւոր նպատակներէն մէկը:



Հայ գրականութեան տագնապալից ներկայ մեզի կը յիշեցնէ, թէ որքան ճակատագրական պարտականութիւն է ամէն գնով պահպանել «Բագին»ի նման հրատարակութիւն մը:

Կը կարծենք, թէ օրէ օր աւելի ծանր ու պատասխանատու պարտականութիւն կը բեռցուի ամսագրի արժէքաւոր խմբագրին՝ Պօղոս Մնայեանի ուսերուն վրայ, նաեւ բոլոր այն հաստատութիւններուն ու անձերուն՝ որոնք նեցուկ կը կանգնին այս հրատարակութեան: Ամէն ինչ որքան կը դիւրանար, եթէ մենք ազգովին ըմբռնէինք, թէ մէկ օրաթերթ, մէկ գրական ամսագիր առանձինն տասը դպրոց կ'արժեն եւ թէ մեր գրչի մարդիկն են, որ պիտի փրկեն մեր վաղուան ո՛չ միայն գրականութեան, այլեւ՝ ամբողջ մշակոյթին ապագան:

Թող անցեալի մէջ եղածէն ալ աւելի փայլուն ըլլայ «Բագին»ի ապագան: Մեր ջերմ շնորհաւորութիւնները խմբագիր Պօղոս Մնայեանին, «Ազդակ» օրաթերթի խմբագրութեան, գրական էջի կազմակերպիչներուն, եւ բոլոր այն անանուն մարդոց, որոնք համ ու կեանք կը տեսնեն հայ գրականութեան մէջ:

Սիրով՝

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆ

Խմբագիր

ԽՕՍՔ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ

«ԲԱԳԻՆ»Ի ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

27 Հոկտեմբեր 2002, Կիրակի օր, Նիւ Եորքի Առաջնորդարանի «Գավուքճեան» սրահին մէջ հաճելի անակնկալ մը կը սպասէր մեզի՝ երեք պոլսահայ գրողներու՝ Զահրատին, Ռոպէր Հատտէճեանին եւ ինծի։ Նիւ Եորքի հասցեան, Կեդրոնական Սանուց Միութեան 35ամեակի հանդիսութիւններու շրջանակին մէջ, որպէս պատուոյ հիւր հրաւիրեալներու համար հաւաքաբար պաշտօնական մուտք կարելի չէր եղած կազմակերպել, որովհետեւ սրահը ուշ պատրաստուած էր նախորդող Հ.Բ.Ը.Միութեան պատգամաւորներու ողջերթի ճաշին պատճառաւ, եւ մեր հանդիսութիւնն ալ արդէն քիչ մը նկուն մնացած էր՝ լեցուն սրահի սպասումին դիմաց։

Ես առանձինն ուղղուեցայ դէպի սրահին յառաջամասը, եւ երկրորդ կարգին վրայ տեսայ պրն. Պօղոս Մնայեանը՝ ինծի անծանօթ երկու անձնաւորութիւններու հետ։ Երբ կարօտով ու ջերմօրէն կը ձեռնուէինք եւ կը ծանօթանայի իրեն ընկերացող գրողներուն հետ, վստահաբար ինքն ալ նկատած պիտի ըլլար իմ զարմանահար վիճակս եւ այս անակնկալին առթած հրճուանքը, մանաւանդ եթէ ինծի նման յանկարծ մտովի 14 տարի ետ էր գացած՝ մտաբերելու համար նոյն անակնկալն ու անոր պատճառած զարմանքի եւ ուրախութեան արտայայտութիւնն՝ թորոնթոյի «Համագային»ի սրահին մէջ, 1988ին, ինծի ի պատիւ սարքուած մտերմիկ ընդունելութեան սկիզբը։ Այդ օր, հանդիսավար տիկին Ս. Յովհաննէսեանէ յետոյ խօսք առնելով, զիս կրկնակի զարմացուցած էր՝ այդ շրջանի մեր բաւական վառվռուն գրական գործունէութեան եւ առհասարակ յետ Բ. Աշխարհամարտի Պոլսոյ մէջ յառաջ բերուած գրականութեան մասին իր ունեցած ճշգրիտ, ընդարձակ ու մանրամասնեալ ծանօթութեամբ։ Ես, որոշ չափով մեկուսացած մեր համայնքի պայմաններուն բերմամբ, դժբախտաբար հաւասար դիրքի վրայ չէի գտնուել։ Պէյրութի գրական ոլորտին ու յատկապէս իր գլխաւորած «Բագին» գրական ամսագիրի հրատարակութիւններուն մասին գոնէ ընդհանուր գաղափար մը ունենալու տեսակէտէ։ Հետեւաբար, բաւական անճրկած էի, երբ կարգը ինծի եկած էր խօսք առնելու եւ փոխադարձելու իր եղբայրօրէն համակրական արտայայտութիւններուն։ Բաւականացեր էի 14 տարի ետ երթալով յիշատակել մեր առաջին հանդիպումը 1974ին, Պէյրութի մէջ, երբ մեր սիրելի բարեկամ Գրիգոր Շահինեանի առաջնորդութեամբ ձեռնարկած էի Լիբանանի բնական եւ իմացական արժէքներու ճանաչողական շրջապտոյտիս, որ այնքան յանկարծակի կերպով պիտի ընդհատուէր Կիպրոսի թնճուկին յանկարծ արիւնալի պատերազմի վերածուելուն պատճառով։

Ահաւասիկ մեր հասարակաց կեանքէն հատուած մը. հատուկեմտ հանդիպումներ, եւ շարունակուող անսասան հոգեկցութիւն մը, անայլալ նուիրում մը։ 14 տարիներ, առաւել 14 տարիներ. եւ միջանկեալ ինչէ՞ր ու ինչէ՞ր... պատերազմներ՝ կարճատեւ, երկարատեւ, միջազգային կամ ազգամիջեան, յեղափոխութիւններ, ահաբեկչութիւններ, պետական հարուածներ, ճգնաժամեր, պաշարման վիճակներ, հալածանքներ, սեղմումներ, արգելքներ, երկարաձգուող «թապուլ»ներ, վախեր, վերապահութիւններ, զգուշաւորութիւններ եւ մասամբ սոցին...։ Եւ ասոնց հետ միասին 28 տարի - ու թերեւս աւելի...- ծերացողներ, մինչեւ աւելի անդորր ու յուսալի օրերու երկինքին պայծառացումը, երբ աւելի «բնականոն» դարձան Սփիւռքի համայնքներու եւ Հայաստանի հետ մեր յարաբերութիւնները, հնարաւոր գարձան ու բազմացան փոխայցելութիւնները, եւ զարգացաւ փոխճանաչողութիւնը մտաւորականներու շրջանակին եւ արուեստի իրագործումներու մարզին մէջ։

Այս բոլորին մէջ թերեւս միակ չծերացողը «Բագին»ը եղաւ, իսկապէս՝ հայ մտքի եւ ոգիի զոհաբերման ու յաւերժացման Բագինը։ Քառասուն տարիներու ճամբան, զոր ան կտրեց անընդմէջ եւ անխափան,

որքան որ յաճախ տագնապալից ու փշալից, եղաւ նաեւ նոյնքան պտղալից ու պատուաբեր՝ թէ՛ իրեն, եւ թէ՛ զինքը կանգուն ու գործօն պահողներուն համար։ Այսօր թերեւս ոմանց կողմէ անտեսուած զոհողութիւնները, որոնք անկասկած կատարուեցան՝ դժնդակ պայմաններու մէջ, քառասնամեայ գրական - մշակութային փառաւոր վաստակի մը եւ կենսունակ ներուժի մը գրաւականը կազմեցին։ Ասոր խօսուն ապացոյցն է քառասնամեակի բացառիկը՝ առոյգ, ուժեղ, առատապէս բովանդակալից, որուն համար սակայն խմբագրականը կ'ըսէ՝ «առ այդ (բացառիկ) որեւէ ճիգ ի գործ չդրուեցաւ»։

Իսկապէս, ի՞նչ պէտք չեչտելու. հայաշխարհի մէջ ամէն մշակութային-գեղարուեստական գործ բացառիկ ճիգի արդիւնք է, որ նաեւ այս պարագային՝ շարունակական եղած է եւ պիտի շարունակուի։ 144 մեծադիր էջերով այս գեղեցիկ հատորի ճակատին արձանագրուած ԽԱ. տարի, թիւ 1ը կը նայի արդէն գալիք տասնամեակներուն։

Բարեյաջող երթ, առաւել երախտաշատ սխրանք «Բագին»ին։

Ա. ՃԻԹԻՇԵԱՆ
(Զարեհ Խրախունի)

Իսթանպուլ, Նոյեմբեր 14, 2002

Պատուարժան խմբագրութիւն «Ազգակ»ի,

Միացեալ Նահանգներէ վերադարձիս, գտայ սիրելի բանաստեղծ Ս. Կիրակոսեանի ստորագրութեամբ շրջաբերական մը, «Բագին» ամսագիրը արդէն իսկ 40 տարեկան է։ Գիտէի արդէն, Պօղոս Սնայեանը տեսած էի Նիւ Եորքի մէջ. ըսաւ, որ տօնած էին այդ տարեդարձը հոն՝ Նիւ Եորքի մէջ եւս։ Ուրախ եղայ եւ շնորհաւորեցի։

«Բագին» անունը ինծի ծանօթ է հիմեն ի վեր, կրնամ ըսել՝ 40 տարիէ ի վեր։ Բայց այս անցնող 40 տարիներէն, միայն մեկ - 1 - թիւ ունեցած եմ այդ ամսագիրէն, այն ալ 4 / ԱՇՈՒՆ 2001 թուականի, ուր Պէպօ Սիմոնեանի «Պոլսահայ բանաստեղծութեան նոր դպրոցը - Բ» կուռ գրութեան առընթեր, կան նաեւ բանաստեղծութիւններու կարգին ինձմէ ալ չորս բանաստեղծութիւն։

Ուրեմն, այս միակ թիւին հետեւցնելով՝ կրնամ ըսել, թէ «Բագին»ը ընդհանրապէս օգտաշատ բովանդակութիւն ունի եւ մենք՝ գրողներս պէտք է յարգանքով ու ակնածանքով մօտենանք «Բագին»ին, որ արդէն իսկ կրցած է գոյատեւել քառասուն տարի։ Վստահ եմ, թէ յիսուներորդ տարեդարձին՝ արդէն իսկ մէկէ աւելի օրինակներ պիտի ունենամ «Բագին»էն, նաեւ առիթը՝ աւելի հանգամանօրէն շնորհաւորելու այս «ղիմացկուն կաղնիին» նորանոր նուաճումները՝ գրականութեան եւ արուեստի մարզերուն մէջ։

Կարողութիւն եւ յաջողութիւն կը մաղթեմ ամսագիրին, անվիատ խմբագիրներուն եւ համակիրներուն, սիրով կը բարեւեմ բոլորը, ներառեալ Սարգիս Կիրակոսեանը եւ կը կրկնեմ շնորհաւորութիւններս։

Սիրով՝
ՋԱՀՐԱՏ

ՆԱՅԻՆԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՆԻ ԿԸ ԼԻՆԵՆ «ԲԱԳԻՆ»ՆԵՐ...

Սովետական վաթսուներկաններին «Բագին»ը արգելուած էր Հայաստանում: Մենք փնտռում էինք ամսագիրը: Մեզ պէտք էր ճշմարիտ խօսք, հայի խօսք: «Ազատութիւն», «Բարի», «Աստուած» բառերը փակի տակ էին պահուում: Կեղծիքը լինելու թեան ու նաեւ գեղագիտութեան հիմքն էր: Կեղծելու, երկերեսայնութեան արուեստի մէջ մրցում էին մտաւորական կոչուածներին շատերը: Ծճարարութիւն էինք փնտռում տողերի արանքում, Աստուած էինք որոնում հազուագիւտ հոգիներում, խղճի ձայնն էինք փորձում հնչեցնել ալլարանութիւններում... Եւ «Բագին»ը այդ օրերին յիշեցնում էր, որ ճշմարտութիւնը չի մահացել, ազգային խնդիրները աքլոյումատիկ են, կենսունակ: Ժամանակին, երբ հայոց ոտքի տակ այլեւս հող չկար, երբ հայոց խօսքը վերանալու վտանգի տակ էր, վեներտիկում պահպանուեց Հայաստանը, հայոց լեզուն: Երբ մեր օրերում ճշմարտութիւնը, խիղճը, Աստուած հանում էին հայի էութիւնից, Սփիւռքում յայտնուեց «Բագին»ը՝ վկայելով, որ հայի ոգեկանը ամուր է, նրա առաքելութիւնը՝ մեծ:

Քանի կը լինեն «բագին»ներ, հայի նախնական էութիւնը չի խաթարուի:

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶԵԱՆ

Արտանց, ջերմօրէն ողջունում եմ «Բագին»ի տարեդարձը եւ քաջա-
ռողջութիւն ցանկանում բոլոր բագինականներին:

Ա. Ա.

Երեւան, Հոկտեմբերի 2002 թ.

Ես վկայում եմ, որ մխիթարութիւն էր «Բագին»ի գոյութիւնը այն ժա-
մանակ, երբ ապրում էինք անազատութեան մէջ՝ մեզանից ու ձեր կեան-
քից կողոպտուած տարիների ընթացքում: Պօղոս Մնայեանի տիրական ու
ազգեցիկ խօսքը նպատակասլաց էր ու դիպուկ, անփոխարինելի ու լաւա-
տեղեակ:

Թող շարունակուի «Բագին»ը Պօղոս Մնայեանով: Ուրիշների համար
ուրիշ հանգէս հիմնէք, երբ դրա կարիքը լինի, ու տայ Աստուած, որ նորե-
րը գերազանցեն արժանաւոր նախորդին:

Սիրով՝

ԱԼԲԵՐՏ ԿՈՍՏԱՆԵԱՆ

P. S. Տեղեակ եմ Ձեր հոգսին: Ձեր մտահոգութիւնը նաեւ իմն է: Հաշ-
ւի առէք թէ՛ ներսի, թէ՛ դրսի մղումները: Երէկուայ օրը շատ հեշտ է վե-
րածուում վաղուայ օրուայ՝ ակնթարթի պէս, ժամանակի մէջ: Եւ սակայն,
իրականում, իրական կեանքի մէջ ու գրական ասպարէզում հին, կայու-
նացած մտայնութիւնն է, որ շարունակուում է. այստեղ, մեզանում դա
իրեն երկար գգացնել կը տայ: Ընդառաջ եկէք՝ հաւասարակշռութիւնը
չխախտելու չափ: Ներդաշնակութեան հասնելու համար հանդիպակաց
շարժում է պէտք: Միասնութիւնը ձգտելի հեռանկար է, բայց քանի դեռ
մեր մէջ մի բան է գերակշռում, փայփայէք ձեր մէջի ուրիշ բանը: Առաջի-
կայում եւս չի սպառուելու այն աւիւնը, որ համաշխարհային «սփիւռքի»
մտայնութիւնը ստեղծեց: Պետականօրէն կայացող Հայրենիքի ներկայու-
թիւնը նոր կերպարանափոխութիւնների առիթ կը տայ, պատրաստ եղէք
ու Ձեր եռանդը սպառուած մի՛ համարէք: Երբ մարի մի տեղ խանդավա-
ռութիւնը, մի ուրիշ տեղ կը ծագի: Ես ներսի մարդ եմ եւ խոստովանում
եմ, որ առաւելապէս Դուք էք մոնետիկը, Ձեզնից լաւագոյններն են մոն-
ետիկները այն ցանկալի վիճակի, որին ձգտում ենք: Բոլորս, անպայման:

Յարգանքով
Ա. Կ.

«ԲԱԳԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ,

Ի մաստնութեան
սահմանին հասած «Բա-
գին» եւ հին ու նոր բա-
գինցիներ,

Ընդունեցէք Երեւա-
նի «Սփիւռք» Գիտաու-
սումնասիրական
կենտրոնի եւ անձամբ
մեր սրտաբուխ շնոր-
հաւորանքները Ձեր քա-
ռասունամեայ հանգըր-
ւանի առթիւ:

Իրականութեան
մէջ, սկսած 60ական
թթ. Ձեզ յաջողուեց ազ-
գայինի եւ համամարդ-
կայինի նոր հայեացքով
սերունդ հասունացել ոչ
միայն Սփիւռքի միջօ-
րէականներում, այլեւ՝
Հայաստանի մէջ: Իսկ
դա մասնաշատկութիւն
է, որին, անկեղծ ասած,
քչերն են տիրացել: Եւ
դա այն դէպքում, երբ
ամէն առիթով շտա-
պում ենք ահագանգ խփել, թէ՛ ամէնուր գրականութեան նահանջը գահա-
վէժ է, թէ՛ Սփիւռքում հայր կողմնում է լինելութեան ազգային աւագանը:

Մենք լաւ գիտենք, թէ արտաքին ու ներքին ինչ խուժեր էք ստիպուած
եղել յաղթահարել չորս տասնեակ այս տարիներին՝ պատերազմ, արտա-
գաղթ, խորհրդային եւ աւանդական պատկերացումների դիմագրաւում,
գրական հայեացքի պաշտպանութիւն, նորը հաստատելու կորով:

«Բագին»ը միայն ճաշակի ամբիոն չի եղել, այլ համախոհների կայուն
չրջանակ, գրական շարժման յուսալի երաշխաւոր: Իսկ այս հանգամանքը
բերում է հայ գրական ընթացքներին «Բագին»ի աշխոյժ դերակատարու-
թեան գնահատութիւնը:

Յետագիծ է թողել «Բագին»ը հայ գրական միասնական ճանապարհնե-
րին:


«Բագին»ն օգնել է մեզ՝ Հայաստանի գրական եւ քննադատական նո-
րահաս ուժերին ճիշդ կողմնորոշուելու, խորհրդային դադափարագրա-
կան կաղապարներից արագ ձերբազատուելու, ազգային գրական արժէք-
ները նոր, սթափ հայեացքով վերիմաստաւորելու ներհակ ճանապարհին:
Հարկ եղած դէպքում նա աւագախրել է կեղծ, ուռնացած գրական յու-
շարժանները, պարզել գրական այս կամ այն մեծութեան չափորոշիչները՝
համաշխարհային խորքով:

Քառասուն տարի դուք, սիրելի բագինցիներ, մաքուր եւ անապակ էք
պահել մեր բոլորիս համար մասունք գրական բագինը՝ արդարամիտ հո-
գեւորականի նախանձախնդրութեամբ չմանրացնելով սկզբունքները, ու-
սերից վեր պահած մայր ճանապարհի լոյսը:

Աստուած ձեզ հետ: Եւ մենք՝ ձեզ հետ, իբրեւ ճամբորդներ, իբրեւ նոյն
գրական ասպարէզը վերակերտողներ:

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Բանասիրական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր
«Սփիւռք» Գիտաուսումնական կենտրոնի տնօրէն



28 Հոկտեմբերի 2002

«ԲԱԳԻՆ»՝ ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ

Ժամանակը որքա՛ն արագ կը սահի: Երէկի պէս էր, երբ իմ «Կրակե օղակը» պատմուածքս լոյս տեսաւ նորաստեղծ «Բագին» ամսագրի 1962ի Մարտ ամսուան համարին մէջ: Անկէ ետք դարձայ ամսագրին կանոնաւոր աշխատակիցը:

Եթէ այդպէս եղած չըլլար, ինծի պիտի պակսէր աշխատելու այն խայծը, առանց որուն ներշնչումն իսկ կը դառնայ ամուլ, այսինքն՝ անպտուղ: Որովհետեւ հակառակ ոմանց հաստատումներուն, որոնք կը գրեն իբրեւ թէ իրենք իրենց համար, այսինքն ընթերցողի պէտք չունին, գրականութիւնը մտածուած ու խնամուած երկխօսութիւն մըն է, որ պէտք ունի ունկնդիրներու եւ խօսակիցներու:

Մեր, այսինքն՝ հայութեան պարագային, ամսագրերը ունին մեծ կարեւորութիւն, որովհետեւ տրուած ըլլալով մեր ազգին ցրուածութիւնը եւ գիրք հրատարակելու դժուարութիւնը, ամսագիրը ասպարէզ հանդիսացած է երիտասարդ ու նաեւ համբաւի տիրացած գրողներու գործերուն ծանօթացման:

Կարելի է հաստատել, որ իր գոյութեան քառասուն տարիներուն ընթացքին, «Բագին» ամսագիրը ո՛չ միայն հրատարակեց վաստակ ունեցող գրողներու յօդուածները, պատմուածքները եւ վէպերը, այլեւ քաջալերեց ապագայ խոստացող նորեկները՝ տեղ տալով անոնց գրութիւններուն:

Եւ առանց այդ առաջադրանքներուն՝ տաղանդ ունեցող քանի՛ երիտասարդներ մուծի մէջ պիտի մնային եւ մեր գրականութիւնը պիտի զրկէին արժէքաւոր գործերէ:

«Բագին» այսքանով չգոհացաւ. ան ուզեց իր ընթերցողները տեղեակ պահել գրական, գեղարուեստական եւ մտաւորական միջազգային անցուղարձերուն, իր կարելիութեանց սահմաններուն մէջ ներկայացնելով կշիռ եւ ըսելիք ունեցող մտքի քուրմերուն գործերէն նմոյշներ, մեկնաբանել եւ վերծանել նոր գաղափարները եւ նոր ուղիներ բացող ռազմավարները, մանաւանդ անոնք, որոնք ստեղծեցին գերիրապաշտութեան եւ գոյութեանապաշտութեան յաջորդող գրական նոր շարժումները, որոնք անծանօթ պիտի մնային մեր ընթերցող հասարակութեան:

Ջարմանալին հոն է, սակայն, որ երբ ներկայիս հայութիւնը կ'ապրի նիւթապէս անբաղդատելիօրէն բարգաւաճ շրջան մը, երբ միլիոններ կը տրամադրուին Հայաստանի եւ Արցախի պահանջները գոհացնելու, Սփիւռքի մէջ միլիոններ կը ծախսուին առաջնորդարանները բարեզարդելու եւ նոր եկեղեցիներ կառուցանելու, սանթիմ մը իսկ չի տրամադրուիր գրականութիւն կոչուած մարզին, որով կը հպարտանան ու կը պարծենան բոլոր ազգերը, բացի այն մէկէն, որ Հայ Ազգ կը կոչուի:

Այնքան մեղքեր ունիմ, որ չեմ ուզեր մանրամասնութիւններու մէջ մխրճուիլ, չբազմապատկելու համար իմ թշնամիներու թիւը:

Մեծագոյն մաղթանքս է, որ հայ հարուստներուն մէջ գտնուին հին Ամիրաներու օրինակին հետեւող մեկենասներ, որոնք առանձին կամ միասնաբար՝ մէկ միլիոն տոլար ներդրելով հաստատեն գրական Փոնտ մը, որուն եկամուտներէն օգտուին մեր գրողները եւ մեր գրական հրատարակութիւնները:

«Բագին»ին կը մաղթեմ, որ ան վերագտնէ իր սկզբնական շրջանի ամսագրի յաճախակիութիւնը, որովհետեւ ըստ ինծի՝ եթէ եկեղեցւոյ խորանը Քրիստոսի սուրբ սեղանն է, գրական ամսագրերը Գեղեցկութեան եւ Արուեստի աստուածներուն նուիրական Բագիններն են:

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

Փաստիմա, Մ. Ն.

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՅԱՐԱՏԵՒ ՎԵՐԵԼՔ...

«Ազդակ» օրաթերթի
Յարգարժան խմբագրութիւն,

Յարգելի գրչեղբայրներ,

Ձեր գեղեցիկ որոշումը մեր «Բագին» ամսագրի 40ամեակը ըստ արժանւոյն նշելու, շատ տեղին եւ երախտաւոր մի քայլ է: Ջերմօրէն շնորհաւորելով իր նմանը չունեցող մեր «Բագին» ամսագրի 40ամեակը, մաղթում ենք նրա հիմնադիր՝ վաստակաւոր գրող - մտաւորականներին անսպառ ուժ եւ կորով՝ ինչպէս միշտ մնան պատնէշի վրայ՝ որպէս մեր գիր ու դպրութեան պահպան, որ իր բարոյական եւ նիւթական բոլոր ուժերը դրեց այդ զոհասեղանի վրայ:

«Բագին» ամսագրի գոյութեան՝ որպէս «սփիւռքահայ գրական մամուլի երիցագոյն ներկայացուցիչ»ի, հիմնադիրների գոհաբերութիւններին ծանօթացանք 1965էն ի վեր, երբ բախտն ունեցանք նամակցելու նրա շատ սիրելի խմբագիրներէն՝ Կարօ Սասունիի, Եղուարդ Պոյաճեանի (այժմ հանգուցեալներ) եւ Պօղոս Մնայեանի հետ, որոնք եղան «Բագին»ին աշխատակցութեանս կնքահայրերը, հրատարակելով «Սոկրատեսի մահը» երկարաշունչ պոէմս յատուկ ծանօթագրութեամբ:

Մեր գիր ու դպրութեան ասպարէզում «Բագին»ը եղաւ մի շարժուն համալսարան՝ տեղ հասցնելով ինքնատիպ, տաղանդաւոր գրող - բանաստեղծների մի պատկառելի սերունդ՝ հարուստ բերքով:

«Բագին»ը նաեւ եղաւ մեր գիր ու դպրութեան այն բացառիկ հանդէսը, որ դիմացաւ բնական ու անբնական՝ սեւ ու կարմիր դաւերին ու արհաւիրքներին: Շարունակեց լոյս տեսնել անգամ ուղմբերի տարափի տակ՝ փաստելով իր անսակարկ նուիրումը մեր գիր ու դպրութեան:

Մաղթում ենք «Բագին»ին եւ իր նուիրեալներին անսպառ ուժ եւ կորով, յարատեւ վերելք եւ բարի երթ դէպի իր Ադամանդեայ 100ամեակը, երբ մենք կը լինենք լոկ մի յուշ:

«Բարի յիշէք մեզ Ձեր սրտում»:

Յարգանքներով՝

ԱՐՄԱՆՏ

ԵՐԱՆՏԱՊԱՐՏ ԵՆՔ...

Քառասուն տարիներ շարունակ «Բագին» ամսագիրը յաջողեցաւ իր շուրջ համախմբել հայ ժողովուրդին ծառայելու մատուցեալ՝ Սփիւռքի այլասերիչ ու բախտորոշ պայմաններուն տակ ստեղծող արուեստի նուիրեալ սպասարկուն, մտաւորականը եւ ընթերցողը:

Երախտապարտ ենք այն բոլոր պաշտօնակիցներուն եւ աշխատակիցներուն, որոնք քառասուն տարի շարունակ անսակարկ մասնակցեցան «Բագին» ամսագրի հրատարակման սրբազան գործունէութեան, պահպանելու համար ազգային, հայ մշակութային եւ նկարագրային տոհմիկ արժէքները:

Կը շնորհաւորենք «Բագին» ամսագրի քառասունամեան, մաղթելով, որ ան շարունակէ իր առաքելութիւնը նոյն թափով եւ յամառութեամբ:

ԹՈՐՈՍ ՉԻՖԼԵԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԻՑՆԵՐԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԲՈՐԵՆ



Ի. Ա. Գ. Ի. Ն. Գ. ՅԱՐԻ 1071 ԿԵՆՏԵՄԲԵՐ ԹԻՒՒ 1

«ԲԱԳԻՆ» ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Նոյեմբեր 5, 2002

«Առագաստ» ամսագրի անունից ջերմօրէն շնորհակարար եմք «Բագին» հանդէսի քառասուն ամեակը, որը երբեք չնահանջեց իր դիրքից՝ մնալով սփիւռքահայ գրական եւ մշակութային նուաճումների լաւագոյն հրատարակութիւններից մէկը: Յանկանում եմք յարատեւութիւն, հոգեկան ու մտաւոր նոր ուժ եւ անբասիր ու մշակութասէր անձանց հովանին:

«Առագաստ» ամսագրի հրատարակիչ տնօրէն
ԹԵՐԵԶԱ ԱԼԱԶԱԶԵԱՆ - ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

«ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ»Ի ՇՆՈՐՀԱԲՈՐԱՆՔԸ...

«Համայնապատկեր» գրական - մշակութային հանդէսն իր եւ բազմա-հազար ընթերցողների անունից շնորհակարար է «Բագին» ամսագրի հիմնադրման 40ամեակը:

Յայտնի ճշմարտութիւն է՝ մեր օրերում հայաշունչ ամսագիր ստեղծելը, առաւել եւս՝ այն պահելը անչափ դժուարին, բայց եւ պատուաբեր գործ է: Ուստի՝ մաղթում եմք «Բագին» ամսագրին, որը միայն հայախօս չէ, այլեւ հայրենաշունչ, երկարակեցութիւն եւ բազում տարիների անակնկալներով լի գեղեցիկ շարունակութիւն, իսկ նրան պահող, պահպանողներին՝ մեծ կամք ու երկաթեայ տոկոսնութիւն: Թող «Բագին»ը դառնայ Սփիւռքը Հայրենիքին կապող այն ոսկէ կամուրջը, որով մի օր բոլոր հայրենակարօտ սրտերը վերադառնալու են իրենց պաշտելի ծննդավայրը՝ Մայր Հայաստան:

Տա՛, Աստուած...

Կենա՛ցդ, «Բագին»:

ՍԱՐՕ ԳԵՈՂԱԿԵԱՆ

«Համայնապատկեր»ի գլխաւոր խմբագիր

ԲԱԳԻՆ ՄԸ՝ ՈՐ ՈՎԱՍԻՍ Է

Արեւմտեան Սփիւռքի մէջ ստեղծագործող հայ գրողը տարօրինակ էակ մըն է: Ան կ'ապրի օդէն առկախ, քանի որ կորսուելու եզրին հասած են լեզուն եւ անոր զուգահեռ ընթերցողները՝ օդը եւ ջուրը գրականութեան: Յոռետեսութիւն: Ահաւասիկ սփիւռքեան հայ մամուլի տագնապը, որուն ականատեսներն ենք բոլորս: Եթէ հայերէնով գրուած հասարակ լուրերն իսկ դժուարութեամբ կը գտնեն իրենց ընթերցողները, ակնկալելիք ոչինչ կայ քերթուածներու, պատմուածքներու եւ կամ վէպերու պարագային:

Եւ եթէ դեռ կան մարդիկ, որոնք հակառակ այս բոլորին կը շարունակեն արտադրել հայերէնով, անոնք կը պատկանին այն «խենթերու» խմբակին, առանց որու մեր աշխարհը ալ աւելի անտանելի վայր մը պիտի ըլլար: «Բագին»ը քառասուն տարիէ ի վեր անոնց կը տրամադրէ իր էջերը, քիչ մը մոռացութեան մատնելով գրական անապատը: Հոն է, որ անոնք կը յագեցնեն իրենց ծարաւը ու կը ստանան այն խթանը, որը նուազագոյնն է մխլաթարանքներուն՝ հրատարակուելիք: Ուստի՝ «Բագին»ը նախ եւ առաջ գրողներու կենսունակութիւն շնորհող ովասիս մըն է: Բայց ոչ հասարակ ովասիս մը, այլ մեր արեւմտեան ովասիսներուն ամենաորակաւորը:

Մաղթենք, որ «Բագին»ը կարենայ տոկալ հողմերուն եւ այսուհետեւ չստիպուի վերստին տուրք տալ նիւթականի հրամայականին, ապա թէ ոչ մեր գրական անապատը քիչ մը եւս կը մթազնի: Եւ եթէ անխուսափելի է անապատը, թող բազմաթիւ ըլլան ովասիսները: Մենք օդի պէս պէտք ունինք անոնց, մանաւանդ «Բագին» կոչուած այս իւրայատուկ ովասիսին:

ՐԱՅՅԻ ՔԵՊԱՊՈՏԵԱՆ - ՔԱՆԴԵԱՆ

ՈՂՋՈՒՆԵԼԻ ՔԱՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ...

Յարգելի բարեկամներ:

Ի՛նչ մեղք, որ «Բագին» հանդէսին տեւական ընթերցող մը չեմ եղած զանազան պատճառներով: Միայն քանի մը օրինակ ձեռքս անցած է պատահաբար, անոնք ալ աջ ու ձախէն ղրկուած են ծանօթներուս կողմէ: Ո՛չ միայն հանդէս, այլ ամէն հայերէն տող, որ կը գրուի, մա՛նաւանդ Սփիւռքի տարածքին, ո՛չ միայն գնահատելի, այլեւ հերոսութիւն մըն է: Ամէն երկրի փոքրամասնութիւնը իր փոքրամասնութեան լեզուն չէ գործածած, այլ գործածած է իր գտնուած երկրի լեզուն, փոքր բացառութիւններով: Կը խորհիմ, թէ որքա՛ն հիացում, նոյնիսկ պաշտամունք կրնաք ունեցած ըլլալ մեր լեզուին հանդէպ, որ դարձած էք անոր պաշտպանը:

Առանց պետութեան, առանց իշխանութեան նեցուկի Ձեր ու Ձեզ նման անձնակորութիւններու ըրածը ո՛չ միայն քաջագործութիւն մըն է, այլեւ հերոսութիւն մըն է:

Ուրեմն, տեւական յառաջանալ՝ առանց ետեւ նայելու ու անցեալը մատ փաթթելու: Փառք Ձեզի ու Ձեզի նման նուիրեալներու:

Սիրով՝

ԱՐՄԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՏԱՄՆԱՄԵԱԿՆԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՄԲ

Իրապէս դժուար է հեռաւորութիւն ստեղծել եւ առարկայականօրէն գրել հարազատի մը մասին, որ այնքան մեծ դեր ունեցած է քու կազմաւորման եւ գրականութեան հետ բարդ յարաբերութեան մէջ:

«Բագին»ը ինծի համար այդ հարազատ հաստատութիւնն է, ձեռով մը՝ գրականութեան առաջին դպրոցը:


Հայրս առաջին բաժանորդներէն մէկը ըլլալով հանդէսին՝ թերթը առաջին իսկ օրէն ներկայութիւն էր մեր տան մէջ: Եղուարդ Պոյաճեանի ու Պօղոս Մնապեանի գրութիւններէն մինչեւ Վահէ Օշականի գրաքննադատական յօդուածներու ու Ն. Սարաֆեանի «Միջերկրական»ի ընթերցումը, առաջին հանդիպումը, հոն կատարուած է:

60ական թուականներու երկրորդ կէսերուն, երբ կանոնաւոր կերպով «Բագին»ի ամսական գրոյցները տեղի կ'ունենային, Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան երկրորդական վարժարանէն ներկայ գտնուող խումբ մը պատանիներուս համար հրաշալի հորիզոն կը բացուէր: Հոն էին այդ օրերուն Պէյրութ բնակող որոշ շրջանակի գրողներն ու մտաւորականները, որոնք իրենց յաճախ տարբեր կարծիքներով, բռուն ու անկեղծ վիճաբանութիւններ կը ծաւալէին: Այդ հանդիպումներուն «որսացուած» որեւէ նոր անուն, Քամիւն ըլլար թէ Քաֆքան, Մաթեոսեանը ըլլար թէ Ալիքեանը, նոր ընթերցումներու խթան կը հանդիսանար:

Աւելի ուշ, երբ Պոյաճեանը մահացած էր այլեւս, իսկ Պօղոս Մնապեանը մասնակի ժամերով հայ գրականութեան ուսուցիչ էր մեզի, կրկին առիթ ունեցանք Ուաթուաթ թաղի խմբագրատունը հանդիպելու, այս անգամ շաբաթական հերթականութեամբ, Մնապեանի կազմած երիտասարդներու գրական խմբակին ծիրին մէջ:

Տարբեր սերունդներու, տարբեր գրական ճաշակներու կողք կողքի ներկայութիւնը, առաջին իսկ օրէն, շատ բնական էր «Բագին»էն ներս: Գուցէ տարբեր ալ չէր կրնար ըլլալ, որովհետեւ դժուար է սփիւռքեան պայմաններու մէջ խումբ մը գրողներ գտնել, որոնք նոյն գրական շարժումին կը հետեւին: Ըսել չեմ ուզեր, որ փորձեր չեն եղած, սակայն գործին շարունակականութեան ապահովումը եւ որակի մը պահպանման ճիգը դժուար է ապահովել: «Բագին»ի ճիգը շնորհալի ուժերու մէկտեղման մէջ կը կայանար:

Հանդէսի քառասնամեայ ժառանգութեան գնահատման մէջ, բնականաբար ամենամեծ վարկը կ'երթայ իր տասնամեակներու խմբագրին՝ Պօղոս Մնապեանի, որ որոշիչ դերը ունեցաւ այս գրական բեմի



«Չարենց 7-ը նորն Անահիտ Չարենցի գործն է. և շախմատի տոկոսով, մկտեղելու, վերահանելու, դաստորոշու և հասարակելու տեղնաւորին ազերսուող բոլոր կրկններով: Վիսթարի աշխատանք մը, որ ինչ է անշուշտ հարազատի առաջնորդի տարկեցով. նուիրումով, պատամուտով, քայքայ սոսկական հարազատութիւնը բացառիկ ուժ մը չէ նման պատասխանատու գործերու առիթով, նաև ու մանաւանդ հասկացողութիւն պէտք է. քափանցելու շնորհ. տարբարազրելու բնագոյ. համեմատելու կարողութիւն ու վերակառուցելու ունակութիւն, արժանիքներ՝ որոնք կը փողփողին քննարկներու բամբակին համարեալ բոլոր էջերուն վրայ, նախաւանկի յափով մը:

Բագրու
ՓԵՏՐՈՒԱՐ 85

նկարագրին ձեւաւորման մէջ: Այդ աւանդին մէջ կ'յնայ լեզուի, գրականութեան եւ մեսրոպեան ուղղագրութեան նկատմամբ տաժուած ջերմեռանդ նախանձախնդրութիւնը: Անկախ դասական ուղղագրութեան համար տարուած անզիջում պայքարէն, չեմ հանդիպած ուրիշ մէկուն, որ այնքան հետեւողականութեամբ հետապնդէ Յակոբ Օշականի կամ Վազգէն Շուշանեանի ձեռագիրներուն հրատարակումը: Անշուշտ աւելի ուշադրութիւն գրուած է, համայնավարութեան տարիներուն, ամսագրին ու անոր զխաւոր խմբագրին Հայաստանի նորահաս, նոր խօսք ըսող գրողները ներկայացնելու ու պաշտպանելու նախանձախնդրութիւնը, «սոցիալիստական իրապաշտութիւն» անունին տակ կատարուած բիրտ յարձակումներուն դէմ: Վերջին 10 - 12 տարիներուն, յատկապէս Հայաստանի անկախացումէն ետք, գէթ տասնեակ մը գրողներ արտայայտուած են, որ Մնապեանի, Բ. Փափագեանի, Վահէ Օշականի, իմ կամ Ս. Կիրակոսեանի մէկ յօդուածը կամ դասախօսութիւնը իրենց համար


ճանչցուած ըլլալու իրավիճակ ստեղծած է, պաշտպանած է սովորական կամայականութիւններէ...

Իսկ եօթանասունական թուականներէն սկսեալ, երբ մեր սերունդը սկսաւ տակաւ ներկայութիւն ըլլալ «Բագին»էն ներս, ապա, այդ տասնամեակի վերջին տարիներուն, խմբագրութեան մաս կազմել նաեւ, աւելի յստակ կը դառնար Պ. Մնապեանի գրական խմբակ կազմելու կամ նորերը քաջալերելու քաղաքականութիւնը:

«Բագին»ի առաջին երեսուն տարիները այդ օրերու հայ կեանքի, հայ իրականութեան ու հայ գրականութեան մէկ դրսեւորումն էին. տարբեր էր Հայաստանի կացութիւնը եւ տարբեր էր Սփիւռքի պատկերը: Անցնող տասնամեակը անցումային հոգեվիճակ մը ստեղծեց, տատանումներու, յոյսերու եւ յուսախաբուութիւններու: Իսկ 21րդ դարը նոր մտահոգութիւններ եւ մարտահրաւէրներ կը ստեղծէ: Սակայն, կը կարծեմ, արդար պիտի ըլլայ հաստատել, որ որեւէ այլ գրական հանդէս, Սփիւռքի մէջ, վերջին քառասնամեակին, չէ ունեցած այն ազդեցութիւնը գրական ճակատի վրայ, ինչ որ ունեցած է «Բագին»ը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՈՂՋՈՒՆԵԼՈՎ «ԲԱԳԻՆ»Ը...



Փարիզ, 14 նոյեմբեր 2002

Ինձի համար «Բագին» անուանումը մինչև այսօր ալ կը մնայ մտածողի առարկայ: Ինչո՞ւ «Բագին»՝ բագիններու կործանումէն աւելի քան հազար եօթը հարիւր տարի ետք: Որովհետեւ՝ դարձած ազգովին քրիստոնեայ՝ գեղարուեստը կը մնայ հեթանոսական: Որովհետեւ գրականութիւնը քրիստոնէութեան զուգընթաց այլ կրօնք մըն է:

Չեմ ակնկալեր պատասխան: Եկած եմ այն եզրակացութեան, որ մեր ժողովուրդը գեղարուեստասէր չէ: Եթէ ըլլար, «Բագին» այսօր կ'ունենար ա՛յլ յաճախականութիւն, ա՛յլ բովանդակութիւն, ա՛յլ զարգացում, մեր գրականութիւնը՝ ա՛յլ գոյավիճակ:

Չեմ ելած յանցաւոր փնտռելու: Այս վիճակի ստեղծման մէջ թերեւս պատասխանատուութեան իրենց բաժինն ունին նոյնինքն գրողները: Թերեւս անոնց խայժը բաւարար առինքնող չէ՝ հմայելու ձուկ-ընթերցողը: Թերեւս պատճառը այն անհատներն են, որոնք իրենց սեփական շահերու հետապնդման մէջ կ'արհամարհեն գեղարուեստին անփոխարինելիութիւնը: Անտեսելով այդ իրողութիւնը, այդ «սեղանաւոր»ները կը ստեղծեն հաղորդակցութեան այնպիսի միջոցներ, որոնք՝ երեւութապէս նորարար՝ խաբուսիկ են խորքին մէջ, մակերեսային, եւ որոնք կը ստեղծուին դրամատան իրենց հաշիւները պարարտացնելու միակ հեռանկարով:

«Ազգակ»ի խմբագրութենէն ստացուած նամակին մէջ կ'ըսուի՝ «մինչեւ նոյեմբեր 15 խմբագրութեանս հասցնել ձեր սրտի եւ հոգու կուռ խօսքը»՝ առանց ճշդելու սահմանները այդ խօսքին:

Անշուշտ որ կայ սահման, անցած եղա՞յ այդ սահմանը: Մաղթանքս է, որ եղած ըլլամ: Այլապէս՝ ի՞նչ խօսք: Ողջունելով «Բագին»ը իր Տարեդարձին առթիւ՝ ջերմագոյն սպասումս այն է, որ՝ անգոսնելով բոլոր ողբասացութիւնները՝ հաւատարիմ իր միակ կոչումին՝ գրականութեան այս հանգէսը վերադառնայ հին օրերու յաճախականութեան, կրկին դառնայ ամսագիր, ճախրէ, արձանագրէ նուաճումներ, եւ ինչպէս որ կ'ակնկալուի նոյնինքն գրողէն, գերազանցէ ինքզինք:

Եղած եմ ժամանակակից «Բագին»ի ծնունդին, չըլլա՛յ, չըլլա՛յ որ դառնայ ան ժամանակակից իմ անհետացման:

Պարզապէս հարց է ազգային արժանապատուութեան:

ՄՈՎՍԵՍ ՊՉԱՔՃԵԱՆ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ «ԲԱԳԻՆ»Ի ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Գրականութեան եւ արուեստի նուիրուած մեր ամսագիրներն ու պարբերաթերթերը գրականութեան զարգացման սատարող մշակութային հանդիսաբեմեր հանդիսացած են՝ հայ ստեղծագործ միտքի խթանումով, որպէսզի անոր շարունակականութիւնը ապահովուի սերունդէ սերունդ:

Արեւմտահայ գրական աւանդութիւնները, զարգացման նոր երանգներով եւ շարունակական թափով, պահեցին Հայկական Սփիւռքի տարբեր ոստաններուն մէջ, հայ գիրի եւ միտքի սպասարկուներու կողմէ, կեանքի կոչուած գրական հանդէսները, որոնք նպաստեցին սփիւռքահայ գրականութեան կազմաւորման՝ վերակերպաւորելով Մեծ Եղեւնով անճիտուած արեւմտահայ գրականութեան դիմագիծը: Անոնք եղա՛ն նաեւ արեւմտահայերէնի ո՛չ միայն պահպանման սպասարանները, այլեւ՝ յղկումին, արդիականացման եւ նրբացումին լեզուա-ոճական դարբինները՝ նոր փայլ տալով անոր արտայայտչական յատկութիւններուն: Սփիւռքահայ գրականութիւնը արգասիքն է գրական հանդէսներու հաւատարմոր ճիգերուն:

Այս շրջագիծէն ներս 1962ին ծնունդ առած եւ լիբանանահայ գաղութի գրական-մշակութային աշխոյժ մթնոլորտին մէջ աճած եւ քառասուն տարիներու ճանապարհ կտրած «Բագին» գրական ամսագիրը մէ՛կն է այն մշակոյթի ջահակիրներէն, որ իր ստեղծագործական բերքով, գրականագիտական եւ գրադատական տեսութիւններով, իմացական-գեղագիտական արծարծումներով, Հայրենիք-Սփիւռք գրական ուժերու մէկտեղումով եւ արեւմտահայ մշակոյթի պաշտպանութեան կողմնորոշումներով իւրայատուկ տեղ կը գրաւէ գրական մամուլի մեր պատմութեան մէջ: Արեւմտահայ ճաշակի հետ նոր յղացքներու հանդիսարանը ըլլալու վկայութիւնը կը կազմեն իր քառասնամեայ բերքը պարփակող հաւաքածոները: Յարատեւման երթի մը մրցանիշով:

Քառասնամեայ բերքին մէջ ակնբախօրէն կողք կողքի են երէց եւ աւանդապահ սերունդի ներկայացուցիչներուն հետ նորերն ու երիտասարդները իրենց երբեմն աւանդախախտ փորձարկումներով՝ խմբագրութեան կողմէ ցուցաբերուած գրական հաւասարակշռուած քաղաքականութեամբ մը: Երիտասարդ գրողներու սերունդը մը աճեցաւ «Բագին»ի էջերուն, ինչ որ առաջադրութիւնը կը կազմէ գրական հանդէսի մը:




Տարակարծութիւններ ունեցած ենք «Բագին»ի հետ, բայց ստեղծագործ Բանը, Հայ Գիրի եւ Ոգիի պաշտամունքը, մշակոյթի կիրքն ու իմացական ոլորտները վեր են ու վե՛հ բոլոր տարակարծութիւններէ:

«Բագին»ի քառասնամեայ վաստակին կերտումին մէջ խմբագրութեան այլ անդամներուն հետ մեծ է դերն ու նպաստը գլխաւոր խմբագիրին՝ գրագէտ Պօղոս Մնայեանին, որ իր գրականութեան ճաշակն ու կիրքը յաջողած է փոխանցել «Բագին»ի իրերայաջորդ տարբեր ճաշակներու տէր սերունդներու ընթերցողներուն՝ վիճելի թէ անվիճելի դատումներու իր ոճով...

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

18 նոյեմբեր 2002

ԲԱՌԻ ՈՒ ԲԱՆԻ ՔԱՌԱՄՆԱՄԵԱՅ ՇՏԵՄԱՐԱՆ ՄԸ



1962ին, «Բագին» խոստամնայից քայլ մըն էր միայն, երբ սկսաւ հրատարակուիլ Պէյրուսի մէջ, եւ յուսատու հեռանկար մը՝ հայ մշակոյթով ու գրականութեամբ տագնապող մտաւորականներու, գրողներու թէ ընդհանրապէս մեր ազգային ճակատագիրով մտահոգ մարդոց համար: Այսօր, սակայն, շնորհիւ տաղանդ, շունչ ու խօսք ունեցող խմբագիրներու առաջնորդութեան, ինչպէս եւ հին թէ նոր հոյ մը գրողներու ձայնակցութեան ու հեւքին՝ գրական այս կենսառողջ ամսագիրը քառասնամեայ վաստակի բերրի շտեմարան մըն է քերթողական խոհի ու խօսքի, գրական թէ իմացական որոնումներու եւ ոգեկան առկայծումներու:

Շտեմարան մը բառի ու բանի, որ, ինչ խօսք, բազմակողմանի վէճեր ունեցող ու բազում տեղերէ խոցոտուող սփիւռքահայ մեր կեանքին համար հրաշալի աղբիւր է ուժի եւ գիմադրականութեան. տոկալու, մնալու, ստեղծագործելու մտաւոր ջերմութիւն ներշնչող, հոգեկան երաշխիք ու խթան թելադրող:

«Բագին»ի քառասնամեակը ողջունելու սահմանուած հակիրճ այս տողերուն մէջ՝ դժուար է անշուշտ հանգամանօրէն անդրադառնալ վերոյիշեալ վաստակի բազմաթիւ երեսներուն, սակայն անկարելի է չլիչել, գոնէ հարեւանցիօրէն, որ անցեալ դարու վաթսուական թուականներուն եւ այնուհետեւ, «Բագին»ը հանդիսացաւ հաւաքավայր սփիւռքահայ ամէնէն կարկառուն գրողներուն՝ Համաստեղէն ու Նշան Պէշիկթաշլեանէն մինչեւ Նիկողոս Սարաֆեան եւ Եղուարդ Պօյաճեան, Արամ Հայկազէն եւ Գուրգէն Մխիթարեանէն մինչեւ Մուշեղ Իշխան եւ Բենիամին Թաշեան: Զուտ գրական հաւաքավայր մը, որուն բացակայութիւնը զգալի պարագութիւն մըն էր այդ տարիներուն, եւ որուն առկայութիւնը ոչ միայն ստեղծագործ աշխատանքի նոր թափ մը պիտի ըլլար հին գրողներուն, այլեւ պիտի ըլլար բերրի հող մը, ուր նոր ուժեր պիտի գային ստանալու իրենց գրական սաղմնաւորումն ու կազմաւորումը:

«Բագին» միաժամանակ շեշտակիօրէն բացուեցաւ դէպի խորհրդահայ գրականութիւնը, եւ գրական առողջ հոտառութեամբ սփիւռքահայ գրասէր զանգուածին ներկայացուց այդ գրականութեան ցորենն ու որոմը, հարազատն ու կեղծը, ինքնածինն ու պարտադրուածը: Այս ձեւով՝ շատ շուտով վերածուելու համար հայ գրողն ու իր բերքը ժողովուրդին հասցընող հեղինակաւոր կամուրջի մը: Եւ սփիւռք մեր կարծիքով եղաւ «Բագին»ի ամէնէն երախտաշատ գործերէն մէկը, սփոփարար աշխատանքը:

Ասոնց քովն ի վեր, ամսագիրը յաճախ իր ակնարկը դարձուց դէպի անցեալի մեր նուիրական ու տաղանդաւոր դէմքերը, վառ պահելու համար անոնց վաստակը եւ անով ուժ ու կորով փոխանցելու համար նոր սերունդներուն: Աչք մը նետեցէք Պետրոս Դուրեանի, Յակոբ Օշականի, Նիկոլ Աղբալեանի եւ Շանթի, Նահատակ Գրագէտներու եւ բազմաթիւ ուրիշներու նուիրուած արժէքաւոր բացառիկներուն եւ պիտի համոզուիք մեր ըսածին:

Այս օրերուն, երբ մեր լեզուն երերումի եւ ընկրկումի յուսահատական պահեր կ'ապրի արեւմտեան շատ մը երկիրներու մէջ, երբ մեր գրականութիւնն ու մշակոյթը նոր ծիլեր չեն արձակեր հին ծառերու քովն ի վեր,

«Բագին»ի նման հաւատքի ու պայքարի ջահակիրները արժանի են ժողովրդեան երախտաշին ու ծափահարութեան:

Ոգեկանօրէն անթեք անհատականութիւն ունեցող հրատարակութիւն մըն է «Բագին». նկարագիր եւ կեցուածք ունեցող գրական թերթ մը, հաւատարիմ՝ ամէնէն առաջ հայ լեզուի բարձրութեան, արժանաւորութեան եւ աւանդներուն, յարձակապաշտ՝ ի հաշիւ մտքի ու մշակութային մաքրութեան, ոգեղէն յաղթանակի ու սլացքի, եւ ի հաշիւ գրականութեան՝ կիրքի հասնող պաշտամունքով:

Փառք իր քառասնամեայ վաստակին:

Պուլեոս Այրէս, 06-11-2002 ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ

ԲԱՐԻ ԵՐԹ «ԲԱԳԻՆ»ԻՆ...

Յարգարժան Խմբագրութիւն «Ազդակ» Օրաթերթի Յարգելի Տեսաք,

Շնորհակալութիւն Զեր 15 Հոկտեմբեր 2002 թուակիր ցամաքի համար, ողջոյնի խօսքով արտայայտելու մեր գնահատանքը «Բագին» ամսագրի 40ամեակին առիթով:

Լիբանանահայ գաղութը եղաւ բախտաւոր՝ ծնունդ տուած ըլլալով գրական-գեղարուեստական մտածողութեան եւ ստեղծագործական շարժումներու: Վերջին կիսադարուն «Ծիածան» եւ «Ակօս», «Անի», «Մշակոյթ» (միացնելով անոր «Ժողովածու»ն եւ «Էջեր») եւ «Ահեկան» հանդէսները եթէ լոյս տեսան սահմանափակ տարեշրջաններով, անոնց կողքին «Շիրակ» եւ «Բագին» ամսագիրներուն վիճակուեցաւ ողջունել իրենց ծննդեան 40ամեակները:

Այսօր, 21րդ դարասկիզբին, փաստօրէն «Բագին»ն է, որ կը շարունակէ իր երթը, որուն քառասնամեայ բերքն ու վաստակը կ'արժանանան գրասէր եւ ընթերցող հասարակութեան գնահատանքին եւ գրական շրջանակներու ջերմ համակրանքին:

Մեր բաղձանքն է, որ «Բագին»ին վիճակուի անխափան երթ ու հեզասահ ընթացք, յատկապէս՝ ընթերցող հասարակութեան տնտեսական դժուարին այս պայմաններուն եւ ոմանց ժլատ վերաբերումին. իսկ վերակենդանացում նախորդներուն եւ կամ ծնունդ՝ նորանուն հանդէսներու:

Այսու, կը շնորհաւորենք «Բագին»ի խմբագրական թէ վարչական գոյգ մարմինները, զայն հովանաւորող Համագայինի պատկան վարչութիւնը, ու մանաւանդ անոր բովանդակութեան մասնակից՝ գրչի ու գեղարուեստի անսակարկ մշակները:

Բարի երթ՝ դէպի կրկնակի 40ամեակներ:

Պէյրուս, 11 Դեկտեմբեր 2002 ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ

«ԲԱԳԻՆ»Ի ԱՌԱՋԻՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐԸ

ԻԱ. դարու արշալոյսին, Սփիւռքի գրական մամուլի վիճակը փայլուն չ'երեւիր: Երբեմնի պարբերականներուն փոխարէն, որոնք ամէնամսեայ կերպով կը հասնէին ընթերցողի սեղանին, այսօր ծանրութեան կեդրոնը տեղափոխուած է թերթերու ամսական յաւելուածներու էջերուն, որոնք երախտաշատ դեր մը կը կատարեն, բայց իրենց ֆիզիքական սահմանափակումին պատճառով հանդէսի մը ներկայութիւնը չեն կրնար փոխարինել:

Այս ընդհանուր խորապատկերին վրայ, «Բագին» կը նշէ իր գոյութեան 40ամեակը: Ան ալ, ամսագրային 35ամեայ կեանքէ մը ետք, ներառեալ լիբանանեան քաղաքացիական պատերազմի 15ամեայ թոհուբոհը, անցած է եռամսեայ հրատարակութեան, պահելով հանդերձ էջերու տարեկան քանակը: Բայց, փոխ առնելով կալիւքո կալիւքի խօսքը, «Eppur si muove» («Տակաւին կը շարժի»): Եւ վերոյիշեալ պատկերը լռելեայն կերպով կը յուշէ, թէ որքան անհրաժեշտ է ապահովել «Բագին»ի գոյութիւնն ու հետագայ զարգացումը:

Շարունակելով «Նայիրի»ի, «Անի»ի, «Ակօս»ի աւանդութիւնը եւ ծնունդ առնելով «Հայրենիք» ամսագրի հոգեվարքի օրերուն, «Բագին» պահած է առաջին երեքին հիմնովին «գրականութեան եւ արուեստի» ուղղութիւնը, իսկ վերջինին համասփիւռքեան տարողութիւնը: Իր սկզբնական շրջանին ան գոլտ միջին արեւելեան, շրջանային հանդէս մը եղած չէր, այլ ստանձնած էր Սփիւռքի բոլոր անկիւններէն աշխատակիցներ ունենալու եւ Սփիւռքի բոլոր անկիւններուն հասնելու առաքելութիւնը:

Դժբախտաբար, լիբանանեան պատերազմը եւ Սփիւռքի տեղաշարժերն ու սերնդափոխութիւնը այդ կրկնակ աշխատանքը խախտած են: Այսօր, «Բագին» չի հասնիր ամէն տեղ ճիշդ ժամանակին՝ մամուլի մէջ հերթական թիւի ծանուցումէն անմիջապէս ետք՝ ինչ որ ի հարկէ խանգարող ազդակ մըն է, ոչ ալ Միջին Արեւելքէն դուրս ապրող գրագէտները (ներառնելով՝ այդ գօտիէն դէպի արեւմուտք շարժողներ), բազմազան պատճառներով, նախկին չափերով կ'աշխատակցին:

Միւս կողմէ, «Բագին» տասնամեակներու երկայնքին մօտէն անդրադարձած է հայրենի գրականութեան ելեւէջներուն, իր տեսանկիւնէն գնահատելով դրական ու բացասական երեւոյթներ, արտասահմանի ընթերցողները անոր հաղորդ դարձնելով, երբ յաճախ դժուար էր կանոնաւոր կերպով ուղղակի հետեւելու գործը: Անշուշտ, գաղափարական յայտնի պատճառներով Հայաստանէն աշխատակցիլը բացառուած էր, ինչ որ վերջին տասնամեակին հիմնովին փոխուած է:

Հայութեան տարտղնուած վիճակը, անոր մէջ սեպի պէս խրած արուեստական պատնէշները բնաւ չնպաստեցին, որ մեր գրական պատկերը լման կերպով տեղ գտնէր մամուլին մէջ: Վերջինս ալ, սակաւաթիւ բացառութիւններով, այս կամ այն կուսակցութեան, այս կամ այն խմբակցութեան իրագործումը եղած է: Իսկ աշխատակիցները, սակաւաթիւ բացառութիւններով դարձեալ, անոր մէջ երեւցած են (կամ ոչ) ըստ կուսակցական կամ խմբակային նախասիրութեան: Այս տեսակի բեւեռացումները, անշուշտ, միշտ խոչընդոտած են գրական արժեքափերու անկողմնակալ կիրարկումին: «Բագին»ը, գաղտնիք չէ, այս ընդհանուր համապատկերին


մէջ բացառութիւն մը եղած չէ: Բայց կը կարծենք, որ յոյժ կարեւոր դեր մը կատարած է՝ համահայկական գրական կեանքը կարելի ու ներկայանալի չափերով կամրջելու առաքելութեան մէջ:

Երբ կ'ըսենք «ներկայանալի», կ'ակնարկենք այն իրողութեան, որ չի բաւեր լուրեր տալ կամ ասկէ - անկէ էջեր հաւաքել՝ նման դեր մը իրագործելու համար, ոչ ալ պատահական գրութիւններ կամ հեղինակներ հիւրընկալել: Անհրաժեշտ է վերլուծական անդրադարձը, քննական ակնարկը, պատճառաբանուած արտատպումը, որպէսզի այդ աշխատանքը իր տրամաբանական հիմնաւորումը ունենայ: «Բագին»ը այդ պաշտօնը գործարած է, որքան որ իր պայմանները կը ներէին ու կը ներեն:

Ան մեծ հետաքրքրութեամբ հետեւած էր, օրինակ, 1960-1980ական թուականներու Հայաստանի «երիտասարդ» բանաստեղծներու երեւոյթին ու անոնց շուրջ ծագած բանավէճերուն: Սակայն, հազուադէպօրէն հանդիպած ենք նոյնքան կարեւոր երեւոյթներու անդրադարձներուն, ինչպիսիք եղած են պոլսահայ նոր բանաստեղծութիւնը, Վահէ Օշականի կամ Գրիգոր Պըլտեանի քերթողութիւնը, «Ահեկան»ի շարժումը, եւ այլն: Ու «Բագին»ի պէս կշիռ ունեցող հանդէսի մը պարադային, ասիկա բաց մը կը յառաջացնէ այլապէս հարուստ անոր 40ամեայ հաւաքածոյին մէջ: Հետեւաբար, երկրորդ քառասնամեակին համար, մաղթելի է, որ հանդէսը նոյն նախանձախնդրութեամբ - առանց զիջելու որակի իր սկզբունքէն - աւելի բացուի մեր իրականութեան մէջ գոյութիւն ունեցող, թէկուզ եւ լուսանցքային, բայց եւ այնպէս յառաջապահ շարժումներուն, անուններուն եւ երեւոյթներուն, անոնց բաժնեկից ըլլայ թէ ոչ:

Ժամանակակից իմացական հարցերուն անմիջական արձագանգը գրական թերթի մը կենսունակութեան մեծապէս կը նպաստէ: Կը խորհինք, որ նոյնիսկ թերթին սեփական դիրքորոշումին հետ կապ չունի, այլ անհրաժեշտութիւն մըն է՝ ընթերցողին (չըսենք հանրութեան) կողմնորոշումի հնարաւորութիւնը տալու համար: Այս խնդիրը լուծելու դժուարութիւնը բնորոշ չէ «Բագին»ի միայն, այլ մեր գրական մամուլին ու, առաջին հերթին, մտաւորականութեան: Քննարկումներու, բանավէճերու, նոյնիսկ՝ գրական նամականիի սակաւութիւնը կամ ի սպառ բացակայութիւնը միայն վնասաբեր է, քանի որ չի նպաստեր յաջող երկխօսութեան մը, հորիզոններու ընդլայնումին: Առանց անդրադարձի, հակազդեցութեան կամ վիճարկումի, միայն լծացումը կը յառաջանայ:

Գրական մամուլը վերջին հաշուով իմացական կեանքի դաշտ ըլլալու եւ ընթերցողին անոր համապարփակ պատկերը բերելու էական առաքելութիւնը ունի: «Բագին»ի չորս տասնամեակներու վաստակը յոյս կը ներշնչէ, որ ան պիտի շարունակէ ծառայել այդ նպատակին:



բացակայութիւնը միայն վնասաբեր է, քանի որ չի նպաստեր յաջող երկխօսութեան մը, հորիզոններու ընդլայնումին: Առանց անդրադարձի, հակազդեցութեան կամ վիճարկումի, միայն լծացումը կը յառաջանայ:

Գրական մամուլը վերջին հաշուով իմացական կեանքի դաշտ ըլլալու եւ ընթերցողին անոր համապարփակ պատկերը բերելու էական առաքելութիւնը ունի: «Բագին»ի չորս տասնամեակներու վաստակը յոյս կը ներշնչէ, որ ան պիտի շարունակէ ծառայել այդ նպատակին:

ՎԱՐԳԱՆ ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

Նիւ Ճըրգի

Բագին

ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ ՀԱՅ ԳԻՐԻ ԵՒ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՆԴՐԱՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱՐԱՆ

Սփիւռքի իրականութեան մէջ գրական հանդէս հրատարակել ընթացիկ տրամաբանութեան դէմ է, յանդգնութիւն է: Պիտի չգտնէք գործնապաշտ կոչուած անձ մը, որ խանդավառութեամբ քաջալերէ, նոյնիսկ եթէ գիր-գրականութիւն կը սիրէ: Ո՛չ միայն գործնապաշտները, այլ նաեւ գրասէր-ները, որոնք նման հրատարակութիւն մը կ'ակնկալեն, բայց անոր յաջողութեան եւ մանաւանդ տեւելու կարելիութեան չեն հաւատար, անոնց թերահաւատութիւնը հեղձուցիչ է: Ի հարկէ նեցուկներու կարիք ունի գրական հանդէս մը: Բայց ինչո՞ւ ժողովուրդը ինք պիտի չըլլայ հաւաքաբար նեցուկ, ոչ թէ նիւթական միջոցներ հայթայթելով, այլ ըլլալով ընթերցող եւ գանգուածային կերպով բաժանորդ, քանի որ ինք է չափանիշ եւ ժառանգորդ անցեալ եւ ստեղծուող մշակոյթի:

Քառասուն տարի առաջ, «Բագին»ի հրատարակութեան հետ աստիճանաբար բջիջ մը կը կազմուէր, երէցներ եւ երիտասարդներ, որոնք կը խմբուէին գիրար լսելու համար: Շնորհներու յայտնաբերման եւ մտածումներու խմորման ենթահող են նման բջիջներ: Կը քննարկուէին Հրանտ Մաթեւոսեանի պատմուածքը եւ ռուս գրող Շոլոխովի գործը: Այդ օրերուն հաճելի էր տեսնել, որ գիր-գրականութեան նուիրեալներու եւ սէր


ունեցողներու կողքին կային նաեւ ազգային եւ քաղաքական գործիչներ: Այդպէս չէ եղած միշտ: Հետզհետէ՝ նուազ: Արդարեւ, ի՞նչպէս կարելի է քաղաքական-ազգային առաջնորդութիւնը անջատել մշակոյթէն: Հայ կեանքի լճացումներու պատճառներէն մէկը այս Պերլինի պատնէսն է, որ հետզհետէ աւելի կ'ամրանայ, կը բարձրանայ: Մինչդեռ, եթէ նուազագոյն չափով ծանօթ ըլլայինք քաղաքական մեծ դէմքերու կեանքին եւ ունակութիւններուն, պիտի տեսնէինք որ անոնք նաեւ մշակոյթի մեծ գործիչներ են, իրենց լեզուին մեծ վարպետները եւ գրագէտներ: Շարլ տը Կօլ, Անտրէ Մարիօ, Վաքլաւ Հաւէլ...


Ժամանակակիցներս զրահի վերածած ենք ժամանակի սղութեան պատրուակը եւ հրաժարած ենք ընթերցողի առաքինութենէն: Ոմանք պիտի բաւականանային սափրիչներու սեղանին վրայ դրուած դռնաւոր թերթերով, որոնց համար կ'ըսեն, թէ գրաւիչ են: Ախտի վերածուած կեց-լածք: Ժամանակակիցներս բառ ալ հնարած ենք եւ կ'ըսենք, թէ մատչելի պէտք է ըլլայ, ժողովրդական: Եթէ գրականութիւնը եւ ընդհանրապէս մտքի աշխարհը խորհրդածութիւն է, ստեղծագործութիւն, ժամանակը սե-ւեռելու, մարդու հոգին պեղելու, տազնապները արտայայտելու, որոնցմէ զերծ եւ զուրկ չէ, կ'ենթադրեմ, մարդը ընդհանրապէս, ի՞նչ պիտի ըլլայ մատչելին եւ ժողովրդականը: Գրականութիւնը գերանցումի փորձու-թիւն է, յաջողած կամ ձախողած, բայց փլէյ պէք չէ եւ ոչ պակտ տեսիլնէ...

Նպարավաճառային հոգեբանութեամբ առաջնորդուողներ յաճախ հե-տեւեալ հարցումը կ'ուղղեն իրենք իրենց եւ շրջապատին. պահանջ կա՞յ գրական թերթի մը: Ի՞նչ կը կարծէք, որ կ'ըլլայ պատասխանը: Բայց եթէ հարց տաք, թէ կոլֆի դաշտի մը կարիք կա՞յ, ապահովաբար շատ աւելի դրական պատասխան կը ստացուի: Այս երեւոյթը, ինչպէս գրքերու տպա-նաքակի պարզած պատկերը եւ դեռ անոնցմէ վաճառուածը, կը վկայեն այն մասին, որ ազգային պատկանելիութեան եւ որակ նուաճելու ձգտու-մը մեռեալ կէտի վրայ կը գտնուի: Երբ գանգուածները կը հասնին որակի ընդարմացման, ազգը ինք կը դառնայ խոցելի, մարդը կը դառնայ սոսկ արտադրող եւ սպառող: «Բագին»ի քառասուն տարիներու հոլովոյթի ու-սումնասիրութիւնը շահեկան կրնայ ըլլալ, որպէսզի հասկնանք մենք մեզ եւ մեր շրջապատը: Հարստացման, մնայունի, մատչելիի, գրաւիչի խաչմե-րուկին:

Հայ գրականութիւնը հիներով եւ նորերով, իր տազնապներով եւ բար-դութիւններով, անլոյծ հարցերով, փռուած է «Բագին»ի հաւաքածոնե-րուն մէջ: Այսօր կրնաք կարդալ հինգ, տասը, քսան տարի առաջ գրուած էջեր, ոչ թէ հետաքրքրասիրութեան յագուրդ տալու համար, այլ տեսնելու համար, թէ մտածման ինչպիսի հոսանքներու մէջ էինք հաւաքաբար, կը տեսնենք մեր հոլովոյթը: Ոմանց պարագային մահը կեանքի էջը գոցելէ ետք բացած է արժեւորման դուրսը, ինչպէս Եղուարդ Պօյաճեանի: Անծա-նօթ անուններ հետզհետէ տեղ գտած են ներազգային հրապարակի վրայ: Ոչ մէկ կասկած, որ աւելին կրնար ըլլալ, կամ աւելին ակնկալութիւնը բնական է որ ունենանք: Բայց եթէ մատենադարան մը երթաք եւ կանգնիք «Բագին»ներու շարքին առջեւ եւ փորձուիք էջերը դարձնել, ամենայն պարզութեամբ կ'ըսէք, որ անոնք Հանրագիտարանի մը հատորներն են, կամ վկայարան, ուր հոսած է հայ միտքը, որ հետեւած է իր ժողովուրդի ոլորապտոյտ կածաններուն:

Այնքան բնական է, որ «Բագին»ը մեր տունները հասնի հայերէնով, երբ վայրերաններ հայերէնի մահը կը գուժեն, մանաւանդ Սփիւռքի մէջ: «Բա-գին»ի էջերուն մէջ, մեր պատմամշակութային մեծագոյն աւանդը, լե-





զուն, եղած է եւ կը մնայ ստեղծագործական հատու գործիք, պատուար կանգնելով ամէն կարգի այլասերումներու դէմ, կարծէք իր ձեւով կը վկայէ, որ լեզուի այլասերումը սերունդի տեղատուութիւնն է համաշխարհայնացման ծովուն մէջ աշխարհաքաղաքացի դառնալէ առաջ:

Այսպէս կը դիմաւորէի եւ կը դիմաւորեմ «Բագին»ը, երբ կը հասնի, ինչ փոյթ որ երբեմն ուշացումով:

Զգացականութեան տուրք չտալու համար է, որ պիտի չխօսիմ Լիբանանի քաղաքացիական կռիւներու ընթացքին շարունակուած աշխատանքին մասին:

Թէ «Բագին»ը ժամանակի ճաշակին հարկ է պատշաճեցնել, ներկայացման ձեւը արդիականացնել, ինչպէս կ'ըսուի՝ գրաւիչ դարձնել, ոչ ոք դէմ կրնայ ըլլալ: Բայց ճաշակը պէտք է շփոթել արժէքներու եւ արժեքափերու հետ, որոնց շարքին, առաջին գծի վրայ կու գան լեզուն եւ գրական-ստեղծագործական, իմացական բովանդակութիւնը: Ի վերջոյ, բացատրութեան կը կարօտի՝ այն պարզ ճշմարտութիւնը, որ հայ գրականութիւնը հայերէնով կը մշակուի, Ֆրանսական գրականութիւնը՝ Ֆրանսերէնով: Ոմանք անմիջապէս կրնան առարկել, որ այս վերաբերումը կը բխի կեթրոյի հոգեբանութենէ: Տափակ եւ դասական դարձած առարկութիւն: Բացարձակապէս սխալ դատում: Ֆրանսերէն գրուած գրականութիւնը մաս կը կազմէ Ֆրանսայի գրական ժառանգութեան, անգլերէն գրուած գրականութիւնը՝ ամերիկեան կամ անգլիական: Թէ գաղթականի հոգեբանութեամբ կը հպարտանանք, որ հայագգի Ֆրանսացի կամ ամերիկացի գրող է այս կամ այն հեղինակը, հպարտանանք, բայց այդքան: Զաւէն Սիւրմէլեան հայ բանաստեղծ էր իր հայերէն գրած բանաստեղծութեամբ, մնացեալը իր գործն է, իր ասպարէզը, հետեւելով մեր ածուէն դուրս ուղղութիւններու: «Բագին»ի, ինչպէս նաեւ այլ հայ գրական հանդէսներու առաքելութիւնը հայ գրականութեան բեմ ըլլալու մէջ է, հետեւաբար՝ բեմ կենդանի եւ զարգացող հայերէնի: Գրաւչութիւն մշակել հայերէնով հայ գրականութեան համար:

Յաճախ կը մոռնանք, որ նման հրատարակութիւններ կ'ունենան իրենց առաջնորդող եւ ուժական դէմքերը: Ճիշդ է, որ անփոխարինելի մարդիկ չկան, բայց ինչպէս կ'ըսեն Ֆրանսացիները, մարդիկ հաւասար են, բայց ոմանք քիչ մը աւելի հաւասար են: Այս տեսանկիւնէն, «Բագին»ի քառասուն տարիները երբ հպանցիկ կերպով գնահատելու փորձ կ'ընենք, նուազ հպանցիկ կերպով պէտք է ընդգծել Պօղոս Մնայեանի տիրական ներկա-

յութիւնը, առանց որուն «Բագին»ը թերեւս կրնար ըլլալ, բայց նոյն «Բագին»ը չէր ըլլար:

Վաղուան «Բագին»ը պէտք է ըլլայ հայերէնով ստեղծագործելու հրաւեր, հայածնունդ շնորհներու բուծարան, որուն համար ազգը պէտք է գիտնայ ներդրում ընել, նիւթական եւ մարդկային, անանջատելի կերպով, առանց մակերեսային առաջնահերթութիւններէ ճառելու, որպէսզի խմբագիրի գործը չդառնայ խմբակիրի աշխատանք, որպէսզի ազնուօրէն եւ ոչ փշրանքներով վարձատրուի մտքի ազնիւ եւ ազնուական աշխատանքը:

«Բագին»ի քառասնամեակին առիթով այս գիտակցաբար եւ ոստոստող մտածումները կը միտին հին եւ նոր ընդունուած կաղապարներէն դուրս գալ եւ առնուազն հարցադրումներ ընել, որոնք կը վերաբերին եւ գրողին, եւ ղեկավարին, եւ մանաւանդ ընթերցողին, որ պիտի ըլլայ, պէտք է ըլլայ, ընդունուած տարազով, տէր եւ ծառայ: Անոր բազմապատկումը երաշխիքն է վաղուան գրականութեան, մտաւորականի անկաշկանդ եղանակով ստեղծագործութեան եւ անկախութեան:

«Բագին»ով անհրաժեշտ է զարգացնել գրասէրի եւ ընթերցողի մշակոյթ: Այդ ընելու համար, ի հարկէ գրողները պէտք է մօտենան ժողովուրդին, բայց նաեւ բոլոր տեսակի ղեկավարութիւնները ցոյց պիտի տան ուղին, ըսելու համար, որ ազգի հոգին գրականութեան մէջ կը պառկի, անով կ'արտայայտուի, հետեւաբար ազգային ինքնանուաճման համար, ստեղծագործութեան կողքին նոյնքան անհրաժեշտ է ընթերցողին մէջ կրկնուող լոյսը:

Վաղուան «Բագին»ը ինքզինք պիտի չկրկնէ: Բայց տեւողութեան մէջ մնալու համար հայ գրականութեան, մշակոյթի, արուեստի եւ իմացական շարժումներու բեմը, ան ինքզինք պիտի ձուլէ հայ լեզուի, հետեւաբար՝ հայ լեզուամտածողութեան աւազանին մէջ: Նորերով թարմանալու ոստումը եթէ այս ծիրին մէջ տեղի չունենայ, նոյնիսկ եթէ անունը մնայ, «Բագին»ը կը խափանուի:

«Բագին»ը հայու մտքի եւ հոգիի բեմ է: Այդպէս ալ պէտք է մնայ: Այդպէս պէտք է ըլլայ համաժողովրդական կամքը: Այս գիտակցութիւնը վերածել զօղանջի...

3. ՊԱԼԵԱՆ

Հոկտեմբեր 2002, Փարիզ

ՓՈԽԱՆ ԲԱԺԱԿ ՄԸ ԳԻՆԻ «ԼՈՅՍԻ ԱՂԲԻՒՐ» «ԲԱԳԻՆ»ԻՆ ԿԵՆԱՑԸ

Քառասուն տարի երբ ետ կ'երթանք սա պահուն, յետադարձ հայեացքով դիտելու այդ օրերու լիբանանահայ գրական միջնորդը, արդեն կ'ունենանք հիացումի զգացողություն: Սքանչելի հաւատքով կը շնչէր այդ օրերու գրասէր երիտասարդությունը: Ըսինք՝ գրասէր, որովհետեւ ընթերցող հաւաքականություն մը կար մեր շուրջը, ու անոնց մէջ գրելու շնորհներով օժտուած խմբակ մը, որ բոլորուած էր հազիւ քանի մը տարիներու կեանք ունեցող «Բագին»ին շուրջ: Լիբանանահայ հայկական վարժարաններու բարձրագոյն կարգի աշակերտներ կամ նոր շրջանաւարտներ կ'ուզէին հետեւիլ գեղարվեստական ճաշակ փոխանցող ուսուցիչներու քայլերուն: Անոնք ներկայություն էին «Բագին»ին շուրջ, ստեղծած էին գրական-գեղարվեստական այս ամսագիրը, որ նոր դաշտ մը կը բանար օտտեալներու ներաշխարհին դիմաց:

Սա պահուն դէմքեր կը պայծառանան մեր աչքերուն, անուններ կը յամենան մեր շուրթերուն: Կարօ Սասունի, Եղուարդ Պօյաճեան, Վահէ Օշական, Բարգէն Փափազեան, Մ. Իշխան: Անուններ, անուններ, որոնք կային ու այսօր չկան: Պօղոս Մնայեան անոնց կողքին էր, երբ նորածիլ շնորհները դէպի ծաղկում առաջնորդելու պարտաւորությունը ստանձնած էին, միշտ հաւատքին զօրութեամբ: Ապրող անուններուն մէջ պէտք է յիշել Յ. Գեղարդը, եւ այլ անուններ, որոնք հեղինակներն էին քանի մը գրական հատորներու:

Վաստակաւորներու շուրջը համախմբուած նորերը կը պատրաստուէին հանդէս գալ «Բագին»ի էջերուն, եւ խրախոյսը առաջնորդներուն ուժ ու տար անոնց, ինքնավստահութիւն կը ներշնչէր, Ջահը ստանձնողներու փաղանգը կը պատրաստուէր:

Գրական այս նոր շարժումին հետեւեցան Յարութիւն Պէրպէրեան, Խոսրով Ասոյեան, Նազարէթ Պէրպէրեան, Նազ Տէր Սարգիսեան, Քնար Ճինպաչեան, Կորիւն Շահինեան եւ ուրիշներ: Անոնք իրենց առաջին փորձերը ներկայացուցին իրենց ուսուցիչներուն, գնահատուեցան, քաջալերուեցան, յոյսեր ներշնչեցին ապագայի նկատմամբ, ծաղկեցան գարնան շունչէն արթնցող ծաղիկներու նման: Անոնցմէ ոմանք կըրցան շարունակել բացուած ճամբան, եղան բանաստեղծներ, արձակագիրներ, լոյս ընծայեցին գիրքեր: Անշուշտ, նորագիրները ամբողջութեամբ չկըրցան շարունակել տարիներու հետ մնայուն դաշինք կնքելու մոտաներու պայմանագրութեանց հետ: Կեանքն ալ ունի իր օրէնքները, պարտադրանքները, երբ կամքէ անկախ հրաւերներ կը պարտաւորեն ընդառաջ երթալու այլ ուղիներուն: Սա չի նշանակեր, թէ ցանուած հունտերէն ոմանք ինկան աւազի վրայ, ժայռերու վրայ, իսկ ուրիշներ՝ բերրի հողերու մէջ: Ոմանք կազմեցին ընտանիքներ, եւ իրենց ստացած շունչը փոխանցեցին իրենց գաւակներուն, իբրեւ հայ մշակոյթով սնած յաջորդներ:

Եթէ չըլլար «Բագին»ը, իր քառասուն տարիներու անխափան երթով, մեծ կորուստ մը պիտի արձանագրէինք ո՛չ միայն լիբանանահայ, այլեւ՝ գաղութահայ մեր մշակութային, գրական անդաստանին մէջ: Ան եղաւ նաեւ ամուր կապը Հայաստանի գրական շրջանակին հետ, որովհետեւ եթէ Խորհրդային Հայաստանի տարիներուն «Բագին» գաղտնի ընթերցանութեան համար փնտռուած մամուլն էր, ուր կ'արտացոլար ճշմարտութեան սիրոյն եւ պատմութեան արդար վճիռին համար արտայայտուած միտքերու անկեղծությունը: Միւս կողմէ, «Բագին» տեղ տուաւ նաեւ հայրենական գրիչներու ստեղծագործական վաստակին, ծանօթացուց սփիւռքահայ գրողին թէ գրասէրին հայրենի տաղանդներն ու անտաղանդ վրիպածները: Այս անկիւնէն դիտած՝ «Բագին»ի քննադատական էջերը եղան ծա-



Բ Ա Գ Ի Ն Ժ Ե - Ժ Զ. Տ Ա Ր Ի 1977 Ա Գ Ր Ի Լ Թ Ի Ի 4

նօթացումներու բաց դաշտ մը, թիւրն ու թերին բացայայտող:

Լիբանանեան պատերազմը պատճառ եղաւ, որ յաջորդական տարիներ մեր ամսագիրը չկարենայ հասնիլ հոն՝ ուր կ'երթար խաղաղ օրերուն: Այսուհանդերձ, ան չմնաց յուսահատողի դիրքին վրայ, շարունակեց անայլայլ, որովհետեւ ունէր խմբագրական ինքնավստահ կազմ եւ հայ գիրին պաշտամունքը ունեցող հաւատաւոր աշխատակիցներ:

«Բագին» իր ճանապարհին քառասուն տարիները նուիրաբերեց իրարու մօտեցնելու Սփիւռքով ցրուած գրիչները: Աւստրալիայէն մինչեւ Գերմանիա, Քանադայէն մինչեւ ասիական ցամաքամասի երկիրները, Միջին Արեւելքի այլազան անկիւններուն մէջ ապաստան գտած հայորդիներ աշխատակցեցան անոր, փաստելով իրենց ներկայությունը օտար ափերուն վրայ: Ան եղաւ նոյն ատեն միջազգային գրականութեան շարժումները, նորայայտ տեղեկությունները փոխանցող, գրողն ու գրասէրը հետաքրքրող շաղկապ մը, որ մնաց ամուր, հետաքրքրական, միշտ մակարդակ պահպանելու առաջադրանքով: Ու երբ կ'ըսենք Մակարդակ՝ պէտք է

հասկնալ այն բծախնդրությունը, որով ճամբայ ելած էր «Բագին» ու մնաց այդպիսին, որպէսզի խէթ ու խոտան տրամագրություններ չսպրդին գրական այս բեմէն ներս:

Ինչ կը վերաբերի գրական նորայայտ արեւելումներու կամ շարժումներու առկայութեան, «Բագին» ականջ տուաւ նաեւ անոնց, բացաւ իր էջերը՝ ընդունելիին սահմաններուն մէջ քաջալերելով Նոր տրամագրություններու հետեւորդները, բայց նոյն ատեն եղաւ «սահմանապահ», այլանդակ ու արտառոց ճաշակներ սնուցանողներուն նկատմամբ: Վերջին հաշուով, աւանդապահ գրականություն չէր նշանակեր նորագոյնին գնացառումը, բայց նորերն ալ հարկ է որ չմոռնային «հինին» հետքերով ստեղծուած մշակոյթին բարերար դերը:

Գրական սեռերու ներկայացման մէջ հաւասարակշռություն պահած է խմբագրությունը. քերթողական արուեստի կողքին տեղ տուած էր արձակին, պատմուածք ըլլայ, վիպակ թէ յուշագրական գրականություն, թատրերկ թէ քննադատական ակնարկ:

Երկար տարիներու ընթերցողի մեր վկայությունը բերինք այս քանի մը էջերով, յայտնելով մեր խնդակցությունը 40 տարեկան «Բագին»ին տարեդարձային հանդիսութեան: Նոյն ատեն կ'ափսոսանք, որ ընթերցողներու թիւին նօսրանալը վնաս է մեր մշակոյթին, մեր գրականութեան հետ սրտակցելու, մեր արժէքները անտեսելով տգիտաբար մոռնալու այս արժէքաւոր հանդէսը:


40ամեակի այս հրապարակային նշումը թող ըլլայ կանչ մը, կոչ մը, յիշեցում մը Սփիւռքի մեր հայրենակիցներուն, թէ բաժանորդագրուելով «Բագին»ին, հարստացուցած կ'ըլլան իրենց մտահորիզոնը, ներաշխարհը, բարի օրինակ դառնալով շրջապատին, նոր սերունդին:

Կը հաւատանք «Բագին»ի առաքելութեան, եւ նոր նուաճումներ կը մաղթենք անոր խմբագրական կազմին, աշխատակիցներուն, եւ գեղեցիկ արուեստին հետ քայլ պահելու հետաքրքրությունը ընթերցողներուն:

ՇԱՀԱՆԳՈՒՆՏ

Նոյեմբեր 2002
Պէյրուք

ՄՐՏԱԳՐԱԲ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ



«Բագին»ի 40ամեակին նուիրուած մեր այս յաւելուածին մէջ, անկասկած, իրենց քաղցրահունչ խօսքը պիտի ըսէին նաեւ այս անցաւոր աշխարհէն առյաւէտ բաժնուած շարք մը սիրելի անուններ, որոնք իբրեւ խմբագիր ու աշխատակից՝ առաջին օրէն կապուեցան «Բագին»ի, ապրեցան այս ամսագիրին սրտատրոփին կշռոյթներով եւ արդարօրէն եղան անոր կենսունակութիւնն ու յարատեւութիւնը երաշխաւորող ուխտապահներ, որոնց օրինակով ու ճամբայէն շարունակեցին ընթանալ ջահակիրներու աւանդին հաւատարիմ նոր նուիրեալներ:

Ստորեւ կու տանք ներկայացուցական շեշտ ու հանգամանք ունեցող սրտագրաւ վկայութիւններ՝ քաղուած երիտասարդ գրողներու նուիրուած «Բագին»ի

1979 Օգոստոս - թիւ 200 բացառիկէն:

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՈՎ

Իմաստալից եւ թելադրական մտածում մըն է մտասեւեռումի պահ մը ստեղծել բոլոր միտքի եւ գրչի, գրական վայելքի ատակ եւ հետախոյզ ընթերցողներուն համար «Բագին»ի այս 200րդ թիւով:

Մտասեւեռումի այս պահը մեզ կը մղէ անդրադառնալու երեք բառերով տարագելի երեք կարեւոր երեւոյթներու.

- Վաստակ,
- Վկայութիւն,
- Հաւատարմութիւն:

Վաստակ. ո՞վ կրնայ խոստափիլ բառէն, դիմացն այն «Բագին»ներու երկար շարքին, որ գրադարանի մը մէջ կարկը կը լեցնէ անպայման: Տասնեւեռութ տարիներու վրայ տարածուած այս աշխատանքը գործ մը ըլլայէ ետք եւ անդին՝ վաստակ մըն է այսօր, այսինքն՝ հետեւողական, շարունակական ճիգի կուտակեալ արդիւնքը, հայ գրականութեան արտէն քաղուած հունձք մը, կալին մէջ դիզուած ցորենի բլուր մը, որ բնականօրէն իր կենսական տեղն ունի իմացական հացի կարօտութեան եւ անօթութեան այս մեր ժամանակներուն մէջ: Վաստակ մը, որ ապահովաբար պիտի ճանչցուի եւ արժեւորուի հայ նորագոյն գրականութեան մէջ իբրեւ ուսուցիչ մը անապատացող այս աշխարհին մէջ, ուր հեշտակեցութիւնը, հաճոյապաշտութիւնը, կեանքի մակերեսայնութիւնը սկսած են իրենց իշխանութեան եւ ազդեցութեան «ոսկեգարը» ապրիլ՝ հակառակ իրենց պըղնձեայ բնութեան...:

Վաստակ մը՝ որ հայ գրականութեան պատմութեան մէջ պիտի գտնէ իր մնայուն էջը, գալիք սերունդներու համար դառնալու՝

Վկայութիւն մը. այո՛, յստակ, անստուեր խօսքը այն սիրալի ճիգին մասին, որով «Բագին»ի շուրջ համախմբուած հին եւ նոր գրողներ իրենց տուրքը տուին Ս. Մեսրոպի սրբազան պարտքին, վերջին այս երկու տասնամեակներուն: Վկայութիւն մը՝ այն յաւիտենական ճշմարտութեան մասին, որ երբ հայերէն լեզուն կը մնայ կենդանի՝ հայ գրականութիւնը կը մնայ ծաղկուն: Երբ «Նաւասարդ»ները կը շիջին Պոլսոյ մէջ, երբ «Հայրենիք» ամսագիրները իրենց արեւամուտին մէջ կը մարին Արեւմտեան աշխարհի ափերուն վրայ, երբ «Անահիտ»ները իրենց լոյսը կը կորսնցնեն Լոյս-Քաղաքին մէջ, երբ «Ակօս»ները կը դադրին հայ գրչի ակօսումէն եւ «Անի»ները կը լռեն, Պէյրութի աշխարհայնացած մթնոլորտի հեղձանքէն, ահա՛ հայ գիրի քուրմեր կը հաւաքուին նոր «Բագին»ներու մէջ եւ խունկ կը ծխեն Հայ գիրին, հայկական «Տիպ ու տառին», որպէսզի կանանչը վառ մնայ հայոց դպրութեան մէջ: Այսպէս է հայ ժողովուրդը: Ծառեր կը բարձրանան, հասակ կ'առնեն, կը պտղաւորուին: Ծառերը կը թառամին,

բայց չեն մեռնիր: Նոր ոստեր կ'ընծիւղին, նոր ծառ կը դառնան, որպէսզի պարտէզը միշտ կանանչ մնայ, եւ պտղաւորութիւնը՝ անարգել եւ անընդհատ իր բարիքը ցանէ հայութեան կեանքին մէջ:

«Բագին»ի մէջ հին դէմքերու, փորձուած բայց չկոտրած գրիչներու կողքին, նոր դէմքեր, նոր գրիչներ եկան հինն ու նորը իրարու կապելու եւ շղթան անխզելի պահելու: Դպրոցական գրասեղաններէն, աշակերտական փորձերէն, խմբակային ճիգերէն անոնք անցան բանաստեղծի, գրագէտի, քննադատի, վիպագրի հանգրուաններուն եւ բարձրացան հեղինակի դիրքին եւ պատիւին:

«Բագին»ի երկու հարիւր թիւերը առանձնապէս, բայց մանաւանդ հաւաքաբար պերճախօս վկայութիւնն են այս նոր իրագործումին, որ ինքնին անկարելի պիտի ըլլար եթէ չըլլար

Հաւատարմութիւնը հայ գիրի նուիրական առաքելութեան: Այլապէս, ի՞նչպէս ըմբռնել այս «գորշ օրեր»ուն այս պայծառ երեւոյթը: Հացի համար չչարժեցան այդ գրիչները: Հացը առատ էր այլ ճամբաներու վրայ: Փռքէն շատ հեռու էին այդ տղաները իրենց լուռ եւ յաճախ աննշմար կեանքի եւ գործի պայմաններուն տակ: Գեղարուեստական վայելքը, իմացականին այլակերպող ճաշակը, գրականութեան կիրքը, հայութեան զգայարանքը - ահա՛ քառեակ այն ոգեղէն զսպանակը, որ հայ գրականութեան տուաւ այս նոր վաստակը:

Եւ այս բոլորը՝ այն գիտակցութեամբ պայմանաւոր, ըստ որուն՝ հաւատարմութիւնը հայ մշակոյթի գերակայութեան, հայ գիրի պայծառակերպող զօրութեան կը մնայ ամէնէն հակառակ - եւ որքա՛ն հազուադիւր դարձած -առաքինութիւնը այսօրուան հայուն համար, ինչպէս եղած է անցեալի հայուն եւ պիտի ըլլայ գալիք հայրդուոյն: Ա՛յն գիտակցութիւնը, որ՝ հաւատարիմ մնալը հայերէնագիր առաջին տողերուն՝ գաղտնիքն է բոլոր յաղթանակներուն.

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ Իմանալ զբանս հանճարոյ»:

Եւ այդ առաքինութիւնը (vertue) դասական իմաստով կը նշանակէ քաջութիւն:

Շնորհաւորութիւն քաջերուն:

Յարագնաց երթ «արի արանց» նոր արիներուն՝

Գրիչներուն մեր այսօրուան:

ԳԱՐԵԳՐՆ Բ.
ԱԹՈՒԱԿԻՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԹՈՒԱԿԱՆ

Կենդանի մարդու եւ կենդանի գործի ամէն տարեդարձ յաղթանակ մըն է:

Յաղթանակ մը՝ տարուած անշարժութեան, անէութեան եւ ամայութեան դէմ: Ուրիշ խօսքով՝ մահուան դէմ:

Կեանքի յարատեւումը պայքար կը նշանակէ: Իսկ պայքարը կ'արդիւնաւորուի գրական վաստակով:

«Բագին»ի տարեդարձը, այս տեսակէտէն, կրկնապէս ուրախալի յաղթանակ մը կարելի է համարել, որովհետեւ ան ո՛չ միայն իր գոյութեան եւ կենսունակութեան փաստը կու տայ 200րդ թիւը հրատարակ նետելով, այլեւ՝ մահասփիւռ մեր շրջապատին մէջ արուեստի ու բանաստեղծութեան կենսաբեր բարիքը կը տարածէ:

Ամէն ոք կրնայ անդրադառնալ, թէ ի՞նչ կը նշանակէ Սփիւռքի տարածքին եւ, մահաւանդ՝ ներկայի դժնդակ պայմաններուն մէջ գրականութեան նուիրուած ամսագիր հրատարակել: որքա՛ն ճիգ ու զոհողութիւն անհրաժեշտ է անոր պլպլուն լոյսը վառ պահելու համար չորս կողմէն փչող սառնաշունչ հովերուն դէմ: «Բագին» յաղթահարած է այս դժուարութիւնը 18 տարիներ շարունակաբար, 200 անգամ:

Յաջողութիւնը պէտք է կշռել միայն նիւթեղէն տուեալներով: Ազգային ու մշակութային տեսակէտէն մեզի համար ամէնէն ուրախալի երեւոյթը «Բագին»ի կրակը արծարծելու եկող նոր հաւատացեալներու ներկա-

յութիւնն է: Նորահաս նուիրեալներու հաւատամքը եւ ջերմեւանդ աղօթքը՝ հայ բանին յաւերժական ու քաղցր բառերով:

Ի՞նչ արժէք պիտի ունենար հայերէն տառերով լոյս տեսնող հանդէսի մը հարիւրերորդ կամ մինչեւ իսկ հազարերորդ թիւն իսկ, եթէ նոր սերունդին շունչն ու ներկայութիւնը չզգայինք անոր էջերուն մէջ: Այս շունչն է, որ բրածոյ երեւոյթները կ'օժտէ կենդանութեամբ, կը դարձնէ դերակատար առօրեային մէջ եւ թափ ու կշռոյթ կու տայ մեր կեանքի ընթացքին:

Մահը երբեք բացակայ չէ կեանքէն. բայց երբ նոր ծնունդներ կան, երբ նորեր կու գան հիներու ձեռքէն խլելու ջահարշաւի բոցը, մահը պարտուած կը մնայ: Արուեստի եւ դրականութեան բազինները մոխիր չեն դառնար, երբ պաշտամունքի աղօթքներ երկինք կը բարձրանան: Նորերու շրթունքին վրայ հնչող աղօթքի այդ բառերը կրնան նոյնը չըլլալ իբրեւ խօսք եւ իբրեւ երաժշտութիւն: Կրնան նոյնիսկ խորթ թուիլ շատերուն: Ի՞նչ փոյթ կարելորդ աղօթքն է, պաշտամունքը, հաւատքը եւ տաճարին առկայծող ճրագները:

Ահա թէ ինչո՞ւ մեր դրականութեան պատմութեան մէջ յիշատակելի թուական մը կը գառնայ «Բագին»ի 200րդ թիւը:

Մ. ԻՇԽԱՆ

200ՐԴ ՄՂՈՆԱՔԱՐԸ

Գրական-գեղարուեստական հանդէսների կեանքում գրեթէ տասնութ տարիների գոյութիւնը ըստ ինքեան մի կարեւոր նուաճում է, եւ այս ո՛չ միայն հայկական, այլեւ՝ միջազգային առումով: Վերջին տասնամեակում ակնատես եղանք եւրոպական ու ամերիկեան գրական բազմաթիւ պարբերականների փակման, մեծ մասամբ ի հետեւանս նիւթական գլխապտոյտ պատճառող ազդակների: Իսկ սփիւռքահայ իրականութեան մէջ դեռ չծաղկած թօշնում են մեծ յոյսերով հրատարակ ելած հանդէսները՝ տնտեսականից բացի, ընթերցողների պակասութեան պատճառով: Նման պայմաններում եզակի երեւոյթ է «Բագին»ի յարատեւումը, նոյնիսկ լիբանանեան տագնապի ամէնից դժնդակ շրջանում: Հրաշքի վերագրելուց առաւել, պիտի կենտրոնանալ ա՛յն գործօնների վրայ, որոնք մղիչ ուժը հանդիսացան «Բագին»ի յարատեւ երեւման: Առաջին հերթին, պատիւը գնում է խմբագրութեան եւ իր շուրջ համախմբուած մտաւորական այն հոյիին, որոնք իրենց հոգեմտաւոր ճրագը վառ պահեցին, երբ ամէնուր սպառնում էին գորչ ամպերը: Հաւատքի հարց էր՝ լինելու ու չլինելու խնդիր: Կար նաեւ գոյութեանական միստիկը, կեանքի յաղթանակը մահուան դէմ, յարատեւելու սրբազան կիրքն ու գրականութեամբ խաւարը նուաճելու անխախտ վճռականութիւնը: Եթէ լինի արուեստ, կը լինի նաեւ կեանք: Եւ հակառակը: Սփիւռքը չէր կարող առանց «Բագին»ի գոյատեւել: Արդէն մենք, ովկիանոսից այս կողմ, երկար մղձաւանջ ապրեցինք:

Եւ այսօր «Բագին»ը հասել է իր 200րդ մղոնաքարին՝ հրատարակ հանդիսանալով գրական մի ամբողջ սերունդի եւ թրծման քուրայ դառնալով երիտասարդ նոր ուժերի համար՝ անհանգիստ, որոնող, երբեմն խարխափալի, սակայն միշտ առոյգ ու արկածախնդիր: Անցեալի նուաճումները գնահատելով հանդերձ, յոյսի ու մտահոգութեան առանցքը մնում է ներկան: Դափնիները, որչափ էլ դալար, ենթակայ են գունաթափման: Իսկ անցեալի փառքով ապրելը տեղքայ է, մի տեսակ գաղջ թմբիր, որը մահուան սնարն է ստեղծագործութեան: Այն՝ ինչ ասուած է, այլեւս հանրութեան սեփականութիւնն է: Գրողը այլեւս որեւէ առնչութիւն չունի նրա հետ: Նա այժմ կանգնած է չհերկուած նոր դաշտի առջեւ:

Այսօր «Բագին»ը հասել է մի նոր գագաթնակէտի՝ որպէս յենարան ունենալով 200 բազմազան համարներ, իւրաքանչիւր մի-մի սիւն ա՛յն իւրաքանչիւր կառույցի, որը կոչուում է սփիւռքահայ գրականութիւն ու իմացական շարժում: Դասականի հետ ամսագիրը բեմ է հանդիսացել նոր խօսքի, նոր շարժումի: Միջազգային գրականութեան արձագանգի հետ զուգընթաց՝ առաջին անգամ լինելով «Բագին»ը իր էջերը բացել է լիբանանեան ու արաբական գրականութեան առջեւ: Այնտեղ են հնի հետ նորը, Ֆրանսահայն ու պարսկահայը, ամերիկահայն ու աշխարհահայը, երէցն ու կրտսերը, արեւմտահայն ու արեւելահայը: Հայ ստեղծագործ միտքը:

Նոր մղոնաքար արձանագրած լինելով հանդերձ, տակաւին երիտասարդ է «Բագին»ը, մշտանորոգ ու թարմ՝ լի ակնկալիքներով ու խոստումներով: Այնտեղ, ուր խենթութիւն կայ՝ պէտք է լինի նաեւ կշիռ, որովհետեւ առանց մէկի՝ միւսը դատապարտուած է մոլորութեան: Առանց դասականի պատուանդանի՝ նոր խօսքը անհիմն է, եթէ նոյնիսկ յաւակնութիւնն ունի խորտակելու դասականի կուռ ամբարտակները: Արդէն համակ ստեղծագործութիւնը արկածախնդրութիւն է դէպի անյայտը, պայմանով սակայն, որ խօսքը բխի փորձառութեան ակունքից, թէկուզ որչափ էլ արտառուց լինի փորձը, այլապէս բառերը կորցրնում են իրենց խորհրդանշական իմաստը, լաւագոյն դէպքում դառնալով անյարիր գոյների շառաչ: Խիզախութիւն, այո՛: Որոնում, այո՛: Այո՛՝ նոյնիսկ անհեթեթութիւնը, եթէ այդ է նպատակը, սակայն երբեք անհեթեթութիւն, եթէ այդ չէ բանաստեղծի նպատակը: Այլ խօսքով՝ վերացական գոյականին համադրել նիւթական գոյականը, որովհետեւ այսպէս թէ այնպէս, մեր գործը այս աշխարհի հետ է, երբ ածականից առաջ գոյականն էր իշխում:

Եւ քանի դեռ «Բագին»ը կը մնայ թատերաբեմը սփիւռքահայ բազմերկրեայ ու բազմադիմագիծ գրողների, ապա բոլոր գրաւականները կան, որ այն ո՛չ միայն պիտի յարատեւի, այլեւ՝ գրական նոր մղոնաքարեր պիտի կերտի իր դժուարին ճանապարհում:

Իր 200րդ քայլը այդ է ապացուցում:

Յ. ԿԱՐԱՊԵՆՅ